**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 ապրիլի 2014 թվականի N Մ- 355 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի ապրիլի 28-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված եգիպտացորենը՝ (3 տեղ, 66,530 կգ ընդհանուր քաշով, 21,954.90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**7 մայիսի 2014 թվականի N Մ- 356 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի ապրիլի 29-ի համաձայնեցման թերթիկը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ, ներարկիչներ, ասեղներ, հիվանդին հետևելու համար օրագիր, հատուկ թափոնների համար դույլեր, 2 տեղ, 102 կգ ընդհանուր քաշով, 3,435.5 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը, ներարկիչները, ասեղները, հիվանդին հետևելու համար օրագիրը, հատուկ թափոնների համար դույլերը նախատեսված են խրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի, համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ,Ք. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**15 մայիսի 2014 թվականի N Մ - 357- Ա**

**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 15-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Նիդեռլանդներից՝ Ալբերտ Ջ. Ֆիլիպսի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (23 տեղ, 293 կգ ընդհանուր քաշով, 8,476.50 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ ճանապարհածախսը կազմում է 1475 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, Զվարթնոց Տ/Մ) Սպիտակի և Վանաձորի հիվանդանոցներում անվճար խորհրդատվություն իրականացնելու համար:

2. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 358 -Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6627-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5415-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով՝ Ավստրիայից, «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրատվություն, «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի համար ստացված՝ «Volkswagen Caravelle 2.5TD» մակնիշի (2000 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV2ZZZ70Z1H042371, 1,012.26 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,907 եվրո, «ԱՄ ՄՁՄ ՄՏ») մարդատար ավտոմեքենայի ներմուծման ծրագիրը:

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 359 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 14-ի համաձայնեցման թերթիկը, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից «Քաղաքացիական պաշտպանություն առանց սահմանների» կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված բեռի («Opel Vivaro» մակնիշի 2004 թվականի արտադրության կապի կառավարման ավտոմեքենա, նույնականացման համարը՝ WOLF7BDB64V619811, 1000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԱՄ ՄԶՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 359 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի մայիսի 14-ի համաձայնեցման թերթիկը, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից «Քաղաքացիական պաշտպանություն առանց սահմանների» կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված բեռի («Opel Vivaro» մակնիշի 2004 թվականի արտադրության կապի կառավարման ավտոմեքենա, նույնականացման համարը՝ WOLF7BDB64V619811, 1000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 360 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 3/3.8-2/6695-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5349-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՍՌ ֆարինա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00651596) 2014 թվականի ապրիլի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի N 1 հավելվածի համաձայն անասնակերի մատակարարում՝ 9,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-361-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԲԸՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-2/6517-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N 02/2822-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4923-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 108,941 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «ՀԲԸՄ երիտասարդական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհաննես Եորղլեյանի կողմից

«8» մայիսի 2014թ.

**«ՀԲԸՄ երիտասարդական կենտրոնի կահավորում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Քանաքեռցու փողոցի թիվ 1 հասցեում գտնվող շենքի կահավորում: Շենքը իրեն անվճար կացարան է ծառայելու Հայաստանում իրականացվող ծրագրերի շրջանակներում գիտական, ամառային պրակտիկայի, կրթական, մարզամշակութային, երիտասարդական, ուսանողների փոխանակման, սպորտային, սկաուտական և զբոսաշրջության նպատակով Հայաստան այցելող սփյուռքահայ անհատների և խմբերի համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործ | Անհատ սփյուռքահայ բարերար պարոն Վասկեն Յակուբյանը (հասցե՝ Ալ-Մեհդի Բեն Բարակեհ փող. շենք թիվ 1, Դամասկոս 898, Սիրիա): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Քանաքեռցու փող. թիվ 1՝ մշակույթի բնագավառը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 108,941 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որը նախատեսվում է Արաբական Միացյալ էմիրություններից, Լիբանանից և այլ երկրներից կահույք, կենցաղային ապրանքներ, խոհանոցային պարագաներ և այլ կահավորանք ձեռք բերելու և ներկրելու համար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀԲԸՄ ծրագրերով աշխարհի տարբեր երկրներից և ԼՂՀ-ից Հայաստան այցելող տարեկան ավելի քան 500 սփյուռքահայ երիտասարդներ, զինվորականներ, ուսուցիչներ, մտավորականներ, ուսանողներ և մարզիկներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի մայիսի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է 2014 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ներմուծել 108,941 ԱՄՆ-ի դոլարին համարժեք կահավորանք: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել և ներմուծել ստորև նշված ապրանքները հետևյալ համամասնությամբ.<br><br>Արաբական Միացյալ էմիրություններից ներմուծել 107,295 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի ընդհանուր արժողությամբ հետևյալ ապրանքները՝<br>- ննջասենյակի կահույք, սպիտակեղեն, լոգասենյակի աքսեսուարներ՝ 71,458 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- Խոհանոցի պարագաներ՝ 21,785 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- Խոհանոցային սպասք՝ 1,352 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- Լվացքատան սարքավորումներ և պարագաներ՝ 4,700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- Թենիսի և բիլիարդի սեղաններ՝ 2,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- բեռնափոխադրման ծախսեր՝ 6,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:<br><br>ՀՀ տարածքում նախատեսվում է ձեռք բերել 1,646 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի ընդհանուր արժողությամբ հետևյալ ապրանքները՝<br>- բացօթյա աթոռներ և սեղաններ՝ 646 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:<br>- Հեռախոսային ինտերկոմ համակարգ՝1,000 ԱՄՆ -ի դոլարին համարժեք դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի կազմակերպման հետ առնչվող ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, և այլ կազմակերպությունների հետ | ՀՀ սփյուռքի նախարարություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին-ՀԲԸՄ Հայորդաց տներ, հասարակական և մշակութային կազմակերպություններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
տեղակալ ֆինանսական գծով
51-22-50, 51-22-51

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-362-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6198-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ԴԴ/22/3753-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4899-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բոխումի Բերգմանհայլ համալսարանական կլինիկայի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների (121 տեղ, 2,300 կգ ընդհանուր քաշով, 93,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ-ին անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-363-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6180-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ԴԴ/22/3755-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4904-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (22 տեղ, 7,845 կգ ընդհանուր քաշով, 186,843.24 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-364-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6197-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ԴԴ/22/3751-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4903-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների (43 տեղ, 4,593 կգ ընդհանուր քաշով, 167,438.76 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,504 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-365-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/6322-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 26-ի N ՎՄ/3-4/4965-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ԴԴ/22/3708-14 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 768 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (մեկ տեղ (11 արկղ), 96 կգ ընդհանուր քաշով, 2,918,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-366-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-2/6389-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 04/07-1/4368-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 1/06/416-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5058-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության միջոցներով Հայաստանի հանրակրթական դպրոցների շախմատի օլիմպիադայի մասնակիցներին պարգևատրելու նպատակով «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի հասցեով ուղարկված դյուրակիր համակարգիչների, նվագարկիչների և պրոյեկտորի (3 տեղ, 93 կգ ընդհանուր քաշով, 20,270 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը և այլ ծախսերը կազմել են 1,070.02 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկերը կցվում են) ծրագիրը:

2. «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Ցանկ

## ՀՀ դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի 2-րդ փուլի մրցանակների (նվագարկիչ E DOTES DIGITAL MP3 PLAYER) բաշխման

| | Մարզ | Դպրոցների քանակ | Դպրոցի թիմի կազմը |
|---|---|---|---|
| 1. | Երևան | 4 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 2. | Լոռի | 3 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 3. | Շիրակ | 3 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 5. | Գեղարքունիք | 3 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 6. | Կոտայք | 3 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 7. | Արագածոտն | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 8. | Արարատ | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 9. | Արմավիր | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 10. | Վայոց Ձոր | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 11. | Սյունիք | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 12. | Տավուշ | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| | *Ընդ.* | *28* | *140* |

## Ցանկ

## ՀՀ դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի 3-րդ փուլի մրցանակների (Դյուրակիր համակարգիչ ASUS MEMO PAD HD7 ME173X 1A050A WIFI/7"/ANDROID 4.2/8GB) բաշխման

5/18.11

| | Մարզ | Դպրոցների քանակ | Դպրոցի թիմի կազմը |
|---|---|---|---|
| 1. | Երևան | 3 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 2. | Լոռի | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 3. | Շիրակ | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 4. | ԼՂՀ | 2 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 5. | Գեղարքունիք | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 6. | Արագածոտն | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 7. | Արարատ | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 8. | Արմավիր | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 9. | Կոտայք | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 10. | Վայոց Ձոր | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 11. | Սյունիք | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 12. | Տավուշ | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| 13. | Ջավախք | 1 | 5-ական (4 աշակերտ + մարզիչ) |
| | *Ընդ.* | *18* | *90* |

## Ցանկ

## ՀՀ դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի 4-րդ փուլի մրցանակների (Պրոեկտոր Sony VPL DX100) բաշխման

5/18.11

| | Մարզ | Քանակ |
|---|---|---|
| 1. | Գեղարքունիք | 1 |
| 2. | Արագածոտն | 1 |
| 3. | Կոտայք | 1 |
| 4. | Վայոց Ձոր | 1 |
| 5. | Սյունիք | 1 |
| 6. | Տավուշ | 1 |
| | *Ընդ.* | *6* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-367-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6833-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N ԱՄ/22/4254-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5524-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Ստեֆեն Քաշյանի կողմից որպես օժանդակություն «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հայցեով կազմակերպության բարեգործական դեղատան համար ուղարկված դեղորայքի (2 տեղ, 32 կգ ընդհանուր քաշով, 35,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-368-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6778-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5505-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված հակահրդեհային համակարգի սարքավորումները (5 տեղ, 70.5 կգ ընդհանուր քաշով, 7,960.54 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 696.98 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-369-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6624-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5332-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) շրջանակներում՝

1) մանկական խաղահրապարակի խաղասարքեր և մարզասարքեր՝ 474 տեղ, 17,922 կգ ընդհանուր քաշով, 199,163.10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 12,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

2) մանկական խաղահրապարակի խաղասարքեր՝ 459 տեղ, 26,031 կգ ընդհանուր քաշով, 227,916.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 18,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

3) մանկական խաղահրապարակի խաղասարքեր և մարզասարքեր՝ 989 տեղ, 28,900 կգ ընդհանուր քաշով, 340,480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 18,090 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.



4) մանկական խաղահրապարակի խաղասարքեր՝ 933 տեղ, 35,880 կգ ընդհանուր քաշով, 372,440.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 24,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

5) ակացիայի և վարդի տնկիներ ու խոտի սերմ՝ 335 տեղ, 9,150 կգ ընդհանուր քաշով, 75,282 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ.

6) ծաղկասածիլներ՝ 3 տեղ, 1,085 կգ ընդհանուր քաշով, 13,259.60 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,528.600 դրամ, այլ ծախսերը՝ 1,736 եվրո, «Զվարթնոց» ՄՏ.

7) ծաղկասածիլներ՝ 2 տեղ, 740 կգ ընդհանուր քաշով, 9,101.84 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,881,900 դրամ, այլ ծախսերը՝ 1,184 եվրո, «Զվարթնոց» ՄՏ.

8) ծաղկասածիլներ՝ 6 տեղ, 2,440 կգ ընդհանուր քաշով, 28,063.96 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,260,900 դրամ, այլ ծախսերը՝ 3,904 եվրո, «Զվարթնոց» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-370-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-26425/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5099-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պայքար Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52175959) 2014 թվականի ապրիլի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից և բազալտից ապրանքների մատակարարում՝ 6,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-371-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 3/3.8-2/6492-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5100-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նարեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00000395) 2014 թվականի ապրիլի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ներկերի մատակարարում՝ 2,899,421 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-372-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/6270-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4902-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԻՇԿԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02807228) 2014 թվականի ապրիլի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա ապրանքների ձեռքբերում՝ 4,379,325 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-373-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-917-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6916-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 7-ի N ՎՄ/3-4/5504-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1136-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դորմարկեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03536597) 2014 թվականի ապրիլի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի տարածքի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 22,925,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ	Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-374-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6890-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5414-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դաշինք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01519996) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում՝ 1,125,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-375-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6643-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5327-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ թորնթոն» ФБС-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2014 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N AT-AU-014-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-376-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6642-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5326-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԵԴ-ՓՈԻՆԹ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թռուցիկների և հրավիրատոմսերի պատրաստում՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-377-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-2/6390-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4924-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշման մեջ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2132200000 դրամ» բառերը փոխարինել «3,632,200,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհաննես Տոռղելյանի կողմից

«16» ապրիլի 2014թ.

### «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական դրսևորման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479, ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3,632,200,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br>- ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստանը» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անդրանիկ» սկաուտական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը, |

| | | | |
|---|---|---|---|
| | | - «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>- ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>- ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): | |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2014 թվականի դեկտեմբեր ամսին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br>ա) Շենքի ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ:<br>բ) տարածքում գտնվող ենթակառուցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ:<br>գ) Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ<br>դ)Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ:<br>ե) Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերականգման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորանք և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2014 թվականի դեկտեմբերին - 3,233,469,594 դրամ: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի նախագծում | 52,200,000 դրամ |
| | | Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում | 65,524,826 դրամ |
| | | Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ | 28,605,920 դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար | 252,399,660 դրամ |
| | | Շենքի շինարարության աշխատանքներ | 1,733,469,594 դրամ |



| | | | |
|---|---|---|---|
| | | Շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնատեսագրման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսակոմ ցանցերը: Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քեյր Բիլդինգ Սերվիզիս» ՍՊԸ-ի հետ: | 130,000,000 դրամ |
| | | Էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր | 220,000;000 դրամ |
| | | Շենքի ներքին հարդարման աշխատանքներ | 740,000,000 դրամ |
| | | Ապակյա փաթեթների, ներքին ապակյա պատերի և ատրիմանավանդակի պատրաստման աշխատանքներ, որի համար նախատեսվում է պայմանագիր կնքել «Պրոֆ-Ալ» ՍՊԸ-ի հետ: | 60,000,000 դրամ |
| | | Ներքին և արտաքին լուսավորության սարքերի ու կախովի առաստաղների ներկրում | 210,000,000 դրամ |
| | | Դահլիճի, ցուցասրահի, հանդիպումների սենյակների և խոհանոցային կահավորանքի ներկում | 140,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետարան | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի տեղակալ ֆինանսական գծով
51-22-50, 51-22-51

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-378-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6781-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5351-14 եզրակացությունները, ինչպես նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2014 թվականի ապրիլի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-1132-Ա որոշման 1-ին կետում «9,326,234 դրամի չափով» բառերը փոխարինել «9,420,234 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-379-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1049-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-2/6555-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5101-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի ապրիլի 17-ի N 127 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1049-Ա որոշման մեջ (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-075-Ա, մարտի 14-ի N Մ-183-Ա և ապրիլի 11-ի N Մ-286-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի 3-րդ ենթակետում «1,200,000 դրամի չափով» բառերը փոխարինել «1,500,000 դրամի չափով» բառերով.

2) 1-ին կետի 7-րդ ենթակետում «240,000 դրամի չափով» բառերը փոխարինել «700,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-380-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱ-ՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-2/6502-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5098-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի ապրիլի 9-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2013թ. մարտ» բառերը փոխարինել «2014թ. հոկտեմբեր» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-381-Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7131-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5689-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 344,931.14 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (126 տեղ, 9,610 կգ ընդհանուր քաշով, 335,281.40 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«30» ապրիլի 2013

01574053

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## Մարդասիրական օգնություն Հայաստանին

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91202) և ըստ կից ցանկի |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն և ԼՂՀ սոցիալական, կրթության, մշակույթի, առողջապահության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 344,931.14 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 30-ը |

ա. 5/7.1

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 2014 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 30-ը 344,931.14 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>9,610 կիլոգրամ բեռ<br>335,281.40 ԱՄՆ դոլար արժեքով<br>Տեղափոխում՝ 8,150.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | մաքսային պահեստի ծախսեր՝ 1,500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**Ներմուծվող ապրանքների և ստացող կազմակերպությունների ցանկը**

Կոնտեյներ 401

Ստացող՝ Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 204 սենյակ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 010-51-20-50
Բջջ.՝ 091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

| ԴՈՆՈՐ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ֆիլիփս Ալբերթս (CA) | | | բժշկական պարագաներ - այս ապրանքատեսակները տրամադրվելու են ընկերակցության Ստեփանավանի և Վանաձորի բժշկական ծառայությունների իրականացման նպատակով - անվճար խորհրդատվություն՝ հիպերտոնիկ հիվանդությունների, շաքարային դիաբետի, ցնցումային հիվանդությունների և սիրտ - անոթային հիվանդությունների վերաբերյալ : | բժշկական պարագաներ - այս ապրանքատեսակները տրամադրվելու են ընկերակցության Ստեփանավանի և Վանաձորի բժշկական ծառայությունների իրականացման նպատակով - անվճար խորհրդատվություն՝ հիպերտոնիկ հիվանդությունների, շաքարային դիաբետի, ցնցումային հիվանդությունների և սիրտ - անոթային հիվանդությունների վերաբերյալ : | Բժշկական պարագաներ | SC 401-01 | 10 | | 151 | 5,000.00 |
| Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն | Ներսեսյան Հարութ - Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության , Հայաստանի մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Նիկոլ Դումանի 22 ՀՎՀՀ 00032803 | Այդ ապրանքատեսակը բաշխվելու է մինչև 2 տարեկան անապահով ընտանիքների երեխաներին՝ Կաթ հայ մանուկներին ծրագրի շրջանակներում, որը գործում է 1991 թվականից: | Տրամադրվելու է բարեգործական նպատակներով | Մանկական սնունդ | SC 401-02 | | 11 | 4,077 | 26,352.00 |
| Գուդուզյան Նիշան (Mass) | Քոլոյան Կարեն - Երեխաների Վերածնունդ | Երեխաների Վերածնունդ, Վ.Վաղարշյան 24/3, բն 3, ՀՎՀՀ 00069638 | Բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում Արաբկիր բժշկական կենտրոնում: | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով | Բժշկական սարքավորումներ և պարագաներ | SC 401-03 | | 2 | 962 | 150,000.00 |
| | | | | | Հիվանդանոցային մահճակալներ | SC 401-18 | 3 | | 1,878 | 40,000.00 |

| ԴՈՆՈՐ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայկական աջակցության ծրագիր | Տեր Ղազարյան Ռուզան, HDP հիմնադրամ | Հյուման Դիգնիթի ընդ Փիս Բարեգործական Հիմնադրամ (HDP Charitable Foundation), հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Երևան, Հր. Քոչար 14- 45, ՀՎՀՀ՝ 008412 | Կազմակերպությունն իրականացնում է ծրագիր գյուղական համայնքներում գյուղատնտեսական բույսերի մշակության վերաբերյալ: Գյուղացիական համանյքներում ծրագրի շահառուներին անվճար տրամադրում է սերմեր, իրականացնում է ուսուցում, դրանց մշակության և բարձր բերքատվության ստացման թեմաներով: | Բեռի ստացման իրական շահառուներեն են Սյունիքի մարզերում ծրագրի մեջ ընդգրկված Գորայք համայնքի 50 գյուղացիական տնտեսություններ: Բեռը անհատույց տրամադրվելու է նրանց ցանքի և կազմակերպության կողմից տրամադրվող դասընթացներից ստացված գիտելիքների կիրառման արդյունքում բարձր բերքատվություն/ եկամուտ ստանալու և եկամուտը սեփական տնտեսության հետագա զարգացման համար օգտագործելու նպատակով: | սերմեր | SC 401-04 | 1 | | 20 | 125.00 |
| Հայաստանի Ամերիկյան Համալսարան | Օրդյան Անահիտ - Հայաստանի Ամերիկյան Համալսարան | | ՀԱՀ-ի ուսումնական պրոցեսի աջակցության նպատակով | ՀԱՀ-ի ուսանողներ, դասախոսներ, աշխատակիցներ | Գրասենյակային պարագաներ | SC 401-05 | | 1 | 203 | 1,516.27 |
| Վարդան Գրիգորյան (NY) | Բրուս Պողոսյան - Հայաստանի Ամերիկյան Համալսարան | Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187 | ՀԱՀ-ի գրադարանի ֆոնդի համալրում ուսումնական պրոցեսի աջակցության նպատակով | Համալսարանի աշխատակիցները, ուսանողները, դասախոսները | Գրքեր | SC 401-15 | 4 | | 52 | 1,260.00 |
| Որբերի օգնության հայկական հասարակություն | | | | | Համակարգիչներ, հագուստ և գործվածքեղեն | SC 401-06 | 59 | | 1,032 | 72,800.00 |
| Երնանյան Մարլեն (Ca) | Սաջոյան քույր Արուսյակ, Տիրամայր Հայաստանի կուսաստան | Տիրամայր Հայաստանի Կուսաստան Ե. Չարենցի 6, Անի Թաղամաս 3126 Գյումրի, ՀՀ ՀՎՀՀ 5513266 | Բեռները հատկացվում են որբ և կարիքավոր երեխաների բաժանվելու նպատակով: Օգտագործվելու են մանկատների և գիշերօթիկների երեխաների և Տիրամայր Հայաստանի ճամբարի երեխաների կարիքները հոգալու համար: | Բեռի իրական շահառուները որբ և կարիքավոր երեխաներն են թվով 4,000-ից ավել: Յուրաքանչյուր երեխայի տրվում է իր կարիքի համաձայն: Ճամբար գալիս են սահմանամերձ գյուղերի երեխաներ որոնք կարգին զգեստներ չեն ունենում և հարկ է լինում բավարարել ոչ միայն իրենց կարիքները, այլ նաև իրենց քույրերի և եղբայրների զգեստները: | Հագուստ եւ դպրոցական պարագաներ | SC 401-08 | | 2 | 360 | 2,160.00 |



| ԴՈՆՈՐ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արևելյան թեմ | Հարությունյան Ս. - Մեծ Ներսես բարեգործական կազմակերպություն | <Մեծն Ներսես> Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, Երևան Կորյունի 6ա, բն.1, ՀՎՀՀ 01513853 | Նպատակը՝ Գրադարանների կողմից անվճար ծառայությունների մատուցում, ինչպես նաև առանձին գիտաշխատողների և աստվածաբանական թեմաներով զբաղվող մասնագետների կարիքների բարելավելը: | Բեռի ստացման իրական շահառուներն են՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանը,<Մեծն Ներսես> Բարեգործական Հասարակական Կազմակերպությունը և առանձին միաբանները: | Գրքեր | SC 401-07 | 16 | | 220 | 4,800.00 |
| Միացյալ հայկական հիմնադրամ (CMMB) | | | | | Ներարկիչներ | SC 401-09 | | 1 | 47 | 1,171.80 |
| Միացյալ հայկական հիմնադրամ (Health Partners) | Դումանյան Դերենիկ- Առողջապահության նախարարություն | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, Գտնվելու վայրը - ք. Երևան, Նոր-Արեշ 35 Իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նոր-Արեշ 35 ՀՎՀՀ - 02508003 | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | Դեղեր | SC 401-13 | | 1 | 285 | 6,426.24 |
| Միացյալ հայկական հիմնադրամ (Health Partners) | Ավետիսյան Կ. -ԼՂՀ ներկայացուցչությունը Հայաստանում | ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչություն, Երևան, Ն. Զարյան 17ա, ՀՎՀՀ 01538293 | Բարեգործական, ուղարկվում է ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | Բարեգործական, ուղարկվում է ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | Դեղեր | SC NKR 401-14 | 1 | | 42 | 14,031.24 |
| Հայ օգնության ֆոնդ | Սարգսյան Բագրատ - ՀՕՖ | Ամերիկայի հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մասնաճյուղ Հասցեն- ք. Երևան 0010, Խորենացի 22 ՀՎՀՀ - 02517115 | Մարզային բժիշկների մասնագիտական վերապատրաստում, գրադարանների վերազինում, գիտական ռեսուրսների բարելավում | Բեռի ստացման իրական շահառուն հանդիսանում են ՀՕՖ-ի բժշկական ծրագրերի շրջանավարտները, և շարունակական բժշկական վերապատրաստում ծրագրում ընդգրկված մարզային բժիշկները | Բժշկական գրականություն | SC 401-10 | 1 | | 13 | 159.00 |

| ԴՈՆՈՐ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հովարդ Ղարագյոզյան կորպորացիա | Հարությունյանց Ավետիկ - Հովարդ Ղարագյոզյան բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն | Հովարդ Ղարագյոզյան Բժշկական Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ 01533153 | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը Երեխաների անվճար բժշկական օգնություն բարեգործական ծրագրի շրջանակներում: Որոշում N Մ-056-Ա, 25 հունվարի 2013թ. | Շահառուներն են Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաները: Նախատեսվում է տրամադրել անվճար բուժ օգնություն: | Ատամնաբուժական պարագաներ | SC 401-11 | 1 | | 4 | 892.34 |
| | | | | | | SC 401-20 | | 1 | 85 | 5,772.51 |
| Գրիգորյան Վարդան (NY) | Մարտիրոսյան Ռադիկ- Գիտությունների ազգային ակադեմիա | Հայաստանի Հանրապետության, գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարան /ՀՀ ԳԱԱ ՀԳԳ/ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/6 ՀՎՀՀ - 00009631 | Նպատակը - Հիմնարար գիտական գրադարանի ֆոնդերի համալրում գիտական գրականությամբ Հետագա օգտագործման կարգը - գրադարանից օգտվողների սպասարկում | Բեռի ստացման իրական շահառուն - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարան /ՀՀ ԳԱԱ ՀԳԳ/ | Գրքեր | SC 401-16 | 3 | | 43 | 975.00 |
| Դոն Զաֆեի/ԱՄՆ | Եղիազարյան Նունե - Հայկական ակնաբուժության նախագիծ | /Հայկական ակնաբուժության նախագիծ, գտնվելու վայրը՝ Երևան, Այգեստան 5 րդ փ., տ. 7 իրավաբանական հասցեն՝ Երևան, Վրացական 9, բն. 44 ՀՎՀՀ՝ 00074765 | Մասնագիտված բժշկական գրականությունը տրամադրվել է բժիշկ Դոն Զաֆեի/ԱՄՆ կողմից Էրեբունի ԲԿ փոխանցելու համար | "Էրեբունի" ԲԿ-ի ջիթ - կոկորդի բժիշկներ, մասնագիտական տեղեկատվության տրամադրում | Գրքեր | SC 401-17 | 1 | | 29 | 200.00 |
| Գրիգորյան Վարդան (NY) | Զարգնրյան Տիգրան. Հայաստանի ազգային գրադարան | Հայաստանի Ազգային գրադարան ՊՈԱԿ, Երևան 375009, Տերյան 72, ՀՎՀՀ 01506092 | Նպատակը՝ գրադարանային անվճար ծառայություններ մատուցելը, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարելը | Բեռի ստացման իրական շահառուն Հայաստանի Ազգային գրադարանն է, նախատեսվածությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | Գրքեր | SC 401-19 | 6 | | 102 | 1,590.00 |
| | | | | | Լուսանկարներ | SC 401-21 | 1 | | 5 | 50.00 |
| | Ընդամենը | | | | | | 107 | 19 | 9,610 | 335,281.40 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-382-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 3/3.8-2/6999-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 1/06/446-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5690-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գնդակների և շապիկների (25 տեղ, 240.5 կգ ընդհանուր քաշով, 3,077.35 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-383-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7244-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 1/06/460-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 19-ի N ՎՄ/3-4/6091-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի ճանրամարտի ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ճանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ճանրաձողերի (պարագաներով՝ 3 տեղ, 250 կգ ընդհանուր քաշով, 2,127 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ՄՃՓ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ճանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-384-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7307-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 1/06/470-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 19-ի N ՎՄ/3-4/6100-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հեծանվային սպորտի եվրոպական միության (UEC) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հեծանիվների (75 հատ՝ 75 տեղ, 825 կգ ընդհանուր քաշով, 24,698 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 743 եվրո փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-385-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 3/3.8-2/6998-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5688-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված լուսատուները և ամրակայման մասերը (4 տեղ, 122 կգ ընդհանուր քաշով, 1,509.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 224.52 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-386-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7171-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5691-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից, ԱՄՆ-ի «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի միջոցով, «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը՝ բեռնարկղը ներառյալ (3,778 տեղ, 19,810 կգ ընդհանուր քաշով, 41,104.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 7,101 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա որոշման խմբագրությամբ) շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**CAXU 9785916 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ**   ДП-5/Т.И

Տեղերի քանակը՝3777, ընդհանուր քաշը՝19810 կգ, բեռի արժեքը կազմում է 41104.58 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը 7101ԱՄՆ-ի դոլար

| Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի / արկղ / | Ընդհ. քաշը /կգ/ | Նետտո քաշը /կգ/ | Արժեքը $ | ՀՀ ԿԲԾՀՀ որոշումները և շահառուները |
|---|---|---|---|---|---|
| Ալյումինե հենասյուներ | 8 հատ | 545 | 525 | 3600 | Մ- 648-Ա 19.07.2013թ.ամբողջ բեռը նախատեսված է«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպ. հայաստանյան մասնաճյուղի համար |
| Անկեռնի հեղյուսներ | 32 հատ | 116 | 110 | 414.4 | |
| Մետաղյա խողովակներ | 10 հատ | 1361 | 1340 | 1200 | |
| Պերֆերատոր | 1 հատ | 34 | 32 | 399 | |
| Օդամղիչ տերևները հավաքելու | 2 հատ | 32 | 30 | 511.92 | |
| Խոտ հնձիչ բենզինով /կտրող թելով/ | 4 հատ | 65 | 58 | 1332.88 | |
| Խոտ հնձիչ մինի տրակտոր | 1 հատ | 316 | 308 | 2861.45 | |
| Պաշտպանիչ ակնոցներ | 2 տուփ | 2 | 1.5 | 33.58 | |
| Յուղ շարժիչի | 37.85 լ | 46 | 43 | 265.28 | |
| Պլաստիկ տարաներ բենզինի համար | 3 հատ | 5 | 4 | 88.85 | |
| Հարթաչափ | 9 հատ | 11 | 9 | 261 | |
| Սղոց շղթայով /բենզինով/ | 4 հատ | 28 | 23 | 2041.35 | |
| Խոտ հնձիչի կտրող թելեր | 2 տուփ | 3 | 2.4 | 40 | |
| Սեղանի սղոց | 1 հատ | 25 | 23 | 429 | |
| Շինարարական դույլեր | 15 հատ | 14 | 13 | 75 | |
| Սղոց սեղանով | 1 հատ | 36 | 32 | 629 | |
| Գորգ | 17 հատ | 77 | 68 | 510 | |
| Կոմպրեսոր | 2 հատ | 32 | 28 | 518 | |
| Սղոցի շղթա 15 հատ,պաշտպանիչ ակնոց 8հատ,ականջակալ 200հատ | 1 արկղ | 3.5 | 3.2 | 27.77 | |
| Շուշաքղեի էլ. գործիք ձեռքի | 3 հավաք | 27 | 24 | 775 | |
| Սղոց /լոբզիկ/ | 2 հատ | 9 | 7 | 373 | |
| Հոսանքի գեներատոր | 2 հատ | 113 | 107 | 978 | |
| Էլ. Սղոցի կտրող սկավառակներ և թրեր | 12 տուփ | 5 | 4 | 265.26 | |
| Սվերլո | 7 տուփ | 9.5 | 8 | 316.95 | |
| Մեխ կրակող գործիք / օդով / | 10 հատ | 38 | 33 | 1109.72 | |
| Էլ. պտուտակահան | 4 հավաք | 62 | 57 | 1686 | |
| Շուշաթուղթ | 7 տուփ | 2 | 1.2 | 106.3 | |
| Էլ. սղոց ձեռքի | 4 հատ | 20 | 15 | 636 | |
| Էլ. գայլիկոնիչ | 2 հատ | 13.5 | 11 | 244.26 | |
| Գեներատորի մալուխ | 2 կապ | 2 | 1.5 | 110 | |
| Մեխ | 12 տուփ | 17 | 14 | 130.55 | |
| Ռետինե խողովակ | 2 կապ | 2 | 1.6 | 21.98 | |
| Պերֆերատորի գլխիկներ | 3 հատ | 2 | 1.8 | 43.6 | |
| Պտուտակահանի գլխիկների հավաքածու | 5 տուփ | 1.5 | 1.2 | 29.75 | |
| Մետաղյա կցորդների հավաքածու | 4 տուփ | 1 | 0.8 | 39.96 | |
| Կոմպրեսորի յուղ | 3 հատ | 3.5 | 3 | 63.94 | |
| Փայտամշակման գործիքներ ձեռքի | 2 տուփ | 1 | 0.8 | 64 | |
| Պլաստիկ կցորդներ | 167 հատ | 15 | 14 | 83.5 | |
| Պլաստիկ արմունկներ | 60 հատ | 46 | 43 | 188 | |
| Մալուխ օգտ. | 3 արկղ | 136 | 130 | 255 | |
| Պարան սինթետիկ | 1 արկղ | 4.5 | 4 | 45 | |
| Էլ. կցորդներ | 4 արկղ | 18 | 15 | 120 | |
| Մուրճ | 31 հատ | 45 | 41 | 459.94 | |
| Ձեռնոցներ բանվորական | 70 հատ | 3.5 | 3 | 766.5 | |
| Չափամետր | 10 հատ | 2 | 1.7 | 254.47 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մեխ հանող գործիք ձեռքի | 19 հատ | 55 | 52 | 253.59 | |
| Զուգիչ | 4 հատ | 2 | 1.8 | 35.84 | |
| Աստիճան | 7 հատ | 86 | 80 | 943 | |
| Բեռնասայլակ | 11 հատ | 182 | 170 | 959.72 | |
| Երկարացման հաղորդալար | 16 հատ | 25 | 22 | 901.72 | |
| Փոշեկուլ | 2 հատ | 14 | 12 | 139.96 | |
| Տախտակամած | 2 հատ | 128 | 120 | 438 | |
| Գործիքների արկղ օգտ. | 1 հատ | 91 | 87 | 50 | |
| Աղբարկղ | 9 հատ | 17 | 15 | 249.73 | |
| Բանվորական հագուստ | 3 հատ | 4 | 3.5 | 45 | |
| Առաջին օգնության տուփեր | 2 տուփ | 1.8 | 1.5 | 38 | |
| Ջրի տարաներ ծորակով | 2 հատ | 7 | 5.8 | 39.9 | |
| Ակնոց պաշտպանիչ | 30 հատ | 4 | 3 | 119.1 | |
| Պլաստիկ խողովակ | 2530 հատ | 1153 | 1109 | 1624.4 | |
| Լինգ | 2 հատ | 50 | 47 | 80 | |
| Այգեգործական գործիքներ | 4 հատ | 22 | 21 | 140 | |
| Բահ, փոցխ | 8 հատ | 54 | 51 | 210.06 | |
| Էլ. վահանակ | 4 հատ | 18 | 16 | 100 | |
| Սեղան օգտ. | 6 հատ | 200 | 180 | 210 | |
| Մեծահասակի տակդիր | 55 տուփ | 40 | 37 | 330 | |
| Տակաշոր | 2 արկղ | 9 | 7.5 | 20 | |
| Հեռախոս | 1 հատ | 1.4 | 1.2 | 75 | |
| Սոսինձ | 12 հատ | 5.3 | 5 | 108 | |
| Հաշմանդամի սայլակ օգտ. | 8 հատ | 109 | 104 | 240 | |
| Քայլակ | 11 հատ | 75 | 67 | 165 | |
| Ձեռնափայտեր և հենակներ | 8 հատ | 8 | 7 | 40 | |
| Շարժական զուգարան | 4 հատ | 9 | 8 | 80 | |
| Աթոռներ օգտ. | 67 հատ | 608 | 580 | 335 | |
| Դպրոցական պահարան օգտ. | 2 հատ | 363 | 350 | 300 | |
| Բեռնարկղ 40` | 1 հատ | 3870 | 3870 | 2300 | |
| Տախտակ | 9.85 խմ | 6526 | 6425 | 4466.96 | |
| Ֆաներա | 238 քմ | 2722 | 2650 | 1661.44 | |
| Ընդամենը | | 19810 | 19306 | 41104.58 | |

Տրանսպորտային ծախսեր 7101

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-387-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-152-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7132-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5686-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված լաբորատոր ախտորոշիչ նյութերը (մեկ տեղ, 0.45 կգ ընդհանուր քաշով, 188.48 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 94.48 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2014-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-152-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-388-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7168-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5687-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագրի մասին» N Մ-328 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2014 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ N 230414 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հույսի ավան թաղամասի դպրոցի տանիքի մասնակի և թաղամասի էլեկտրական ենթակայանի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 6,975,650 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-389-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7165-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 12-ի N ՎՄ/3-4/5700-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2014 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ N SM-001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա փաթեթների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 8,330,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2014 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ N SM-003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա աստիճանի, բազրիքների և կամրջակի պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 41,666,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2014 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ N SM-004 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պտտվող դռան պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,333,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-390-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7176-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5697-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի ապրիլի 26-ի N Կ-26/04 գրությունը,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-1110-Ա որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին ու Վանաձորի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Հ. Ստեփանյանի կողմից

«26» ապրիլի 2014թ.

### «Վանաձորի «Տարոն-3» թաղամասում կիսակառույց շենքի վերակառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի տնակային ավանների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում՝ գոյություն ունեցող կիսակառույց շենքը ութ բնակարանի վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ ավետարանի առաքելություն» շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ բյուջեի 74 %-ի չափով: Վանաձորի քաղաքապետարան՝ բյուջեի 11 %-ի չափով: «Ֆուլեր» տնաշինական կենտրոն, Հայաստան» հասարակական բարեգործական կազմակերպություն՝ բյուջեի 15 %-ի չափով: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Վանաձոր քաղաքի «Տարոն-3» թաղամաս՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 72,381,000 դրամ, հարկային արտոնություն է ակնկալվում 64,131,000 դրամից: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի ժամանակավոր տնակներում ապրող ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Վանաձորի քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա՝ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի և «Ֆուլլեր տնաշինական կենտրոն, Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում:<br>Բնակարանները շահառուներին հանձնվում են սեփականության իրավունքով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ վերակառուցման շինարարական աշխատանքներ - 01.11.2013 թ. - 31.12.2014 թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - շինարարական աշխատանքների իրականացում՝ 57,460,350 դրամ,<br>- փրփրապլաստե սալերի ձեռքբերում՝ 3,686,000 դրամ,<br>- ցեմենտի ձեռքբերում՝ 2,166,667 դարմ,<br>- չնախատեսված ծախսեր՝ 817,983 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարան, որն այս նպատակով տրամադրել է 18,478,006 դրամ արժեքով կիսակառույց շենք: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-391-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-402-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 3/3.8-2/7003-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ԿՄ/3-4/5707-14 եզրակացությունները, ինչպես նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2014 թվականի ապրիլի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-402-Ա որոշման 1-ին կետում «477,903,130 դրամի չափով» բառերը փոխարինել «550,507,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ-392-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1045-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 14-ի N 3/3.8-2/7183-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5695-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի մայիսի 7-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-1045-Ա որոշման 1-ին կետում «6 մլն դրամի չափով» բառերը փոխարինել «6,800,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 մայիսի 2014 թվականի N Մ-393-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մայիսի 16-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N Մ-258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵ-ԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 19-ի N 3/3.8-2/7454-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 19-ի N ՎՄ/3-4/6151-14 եզրակացությունները, ինչպես նաև «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մայիսի 14-ի N Բ/Ջ-37 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-941-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)» N Մ-258-Ա որոշման 1-ին կետում «6,620 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «8,620 եվրոյին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 394 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-984-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 3/3.8-2/6491-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N ՖԲ/ԱնՄ-4/2895-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N ԱՄ/22/4082-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5181-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N 01/1975-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Իտալիայից «ՊՐՈՁԱ» բարեգործական կազմակերպության կողմից «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (1,837 արկղ, 34,941.55 կգ ընդհանուր քաշով, 77,083 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9,000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Շիրակի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 21-ի «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից 2013-2015 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-984-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

2 CONTAINER FROM ITALY / 2 ԲԵՌՆԱՐԿՂ ԻՏԱԼԻԱՅԻՑ N. MSCU922743.4, MSCU983654.9

| | Pes Արկղ | Weight Net (kg) Մաքուր քաշը (կգ) | Gross Weight (kg) Քաշը – (կգ) | Amount Արժեք - ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|
| PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ | 380 | 1.960,00 | 2.193,00 | 1.500,00 |
| MEDICINALI / ԴԵՂՈՐԱՅՔ | 443 | 10.773,00 | 11.355,00 | 37.953,00 |
| MATERIALE SANITARIO / ԲՈՒԺՊԱՐԱԳԱՆԵՐ | 209 | 3.072,05 | 3.388,05 | 21.274,00 |
| VESTIARIO DISMESSO / ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ | 526 | 6.012,00 | 6.478,00 | 3.980,00 |
| CANDELE / ՄՈՄ | 18 | 380,00 | 398,00 | 200,00 |
| CARROZZINE / ԱՆՎԱՍԱՅԼԱԿ | 1 | 15,00 | 15,00 | 40,00 |
| CANCELLERIA / ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ | | | | |
| a) carta formato A4 / թուղթ Ա4 ձավալի | 26 | 360,00 | 370,00 | 480,00 |
| b) nastro adesivo / կպչուն երիզ (սկոճ) | 2 | 26,00 | 28,00 | 150,00 |
| c) cartelle plastica / ֆայլ (ցելոֆանե թղթապանակ) | 3 | 38,00 | 40,00 | 90,00 |
| d) elastici / ձգախեժ (ռեզին) | 2 | 37,00 | 40,00 | 80,00 |
| e) penne biro / գնդիկավոր ծայրամասով գրիչ | 1 | 11,00 | 13,00 | 200,00 |
| ATTREZZATURE / ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | | | | |
| a) stufe elettriche / էլեկտրական ջեռուցիչներ | 20 | 200,00 | 214,00 | 2.000,00 |
| ALIMENTARI / ՄՆՆԴԱՄԹԵՐՔ | | | | |
| a) pasta / մակարոն | 84 | 5.790,00 | 6.296,50 | 2.556,00 |
| b) acqua minerale / բնական ջուր | 80 | 800,00 | 800,00 | 120,00 |
| c) tonno / ձկան պահածո | 30 | 311,40 | 360,00 | 2.250,00 |
| d) biscotti / թխվածքաբլիթ | 9 | 1.209,00 | 1.353,00 | 1.990,00 |
| e) olio vegetale / բուսական յուղ | 3 | 1.454,00 | 1.600,00 | 2.220,00 |
| TOTALE / ԸՆԴԱՄԵՆԸ | 1.837 | 32.448,45 | 34.941,55 | 77.083,00 |

Կամիլլիանների Միաբանության «Ս. Կամիլլո»
Բարեգործական Հիմնադրամի
Տնօրեն՝ Հ. Մարիո Կուկկարոլլո

 Աշոցք 19.05.2014թ.

---


**Fondazione Umanitaria "S.Camillo"**
**dell' Ordine dei Camilliani**
**2801 - ASHOTSK (Shirak-Armenia)**

ORDO CLER. REG. MINISTRANTIUM INFIRMIS

**Կամիլլիանների Միաբանության**
**«Ս. Կամիլլո» Բարեգործական Հիմնադրամ**
**2801 - ԱՇՈՑՔ (Շիրակ-Հայաստան)**


## ԿԱՄԻԼԼԻԱՆՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «Ս.ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| Ապրանքի անվանումը | Ընդհանուր քաշը (կգ) | Արժեքը (եվրո) |
|---|---|---|
| օգտագործվելու է «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի համար | | |
| PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ | 1.600,00 | 1.000,00 |
| MEDICINALI / ԴԵՂՈՐԱՅՔ | 11.355,00 | 37.953,00 |
| MATERIALE SANITARIO / ԲՈՒԺՊԱՐԱԳԱՆԵՐ | 3.388,05 | 21.274,00 |
| CANCELLERIA / ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ | | |
| a) carta formato A4 / թուղթ Ա4 ձավալի | 370,00 | 480,00 |
| b) nastro adesivo / կպչուն երիզ (սկոճ) | 28,00 | 150,00 |
| c) cartelle plastica / ֆայլ (ցելոֆանե թղթապանակ) | 40,00 | 90,00 |
| d) elastici / ձգախեժ | 40,00 | 80,00 |
| e) penne biro / գնդիկավոր ծայրամասով գրիչ | 13,00 | 200,00 |
| ALIMENTARI: / ՄՆՆԴԱՄԹԵՐՔ | | |
| a) Pasta / մակարոն | 2.000,00 | 830,00 |
| b) acqua minerale / բնական ջուր | 800,00 | 120,00 |
| c) tonno / ձկան պահածո | 360,00 | 2.250,00 |
| d) biscotti / թխվածքաբլիթ | 700,00 | 1.000,00 |
| e) olio vegetale / բուսական յուղ | 800,00 | 1.110,00 |
| Կամիլլիանների Միաբանության «Ս. Կամիլլո» Բարեգործական Հիմնադրամի Կանոնադրության 2-րդ պարագրաֆի 2.1-ի կետի համաձայն բաշխվելու է գրանցված մոտ 600/700 (վեց հարյուր/յոթ հարյուր) անապահով ընտանիքներին | | |
| VESTIARIO DISMESSO / ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ | 6.478,00 | 3.980,00 |
| PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ | 593,00 | 500,00 |
| CARROZZINE / ԱՆՎԱՍԱՅԼԱԿ | 15,00 | 40,00 |
| CANDELE / ՄՈՄ | 398,00 | 200,00 |
| ATTREZZATURE / ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ | | |
| a) stufe elettriche/ էլեկտրական ջեռուցիչներ | 214,00 | 2.000,00 |
| ALIMENTARI: / ՄՆՆԴԱՄԹԵՐՔ | | |
| a) Pasta / մակարոն | 4.296,50 | 1.726,00 |
| d) biscotti / թխվածքաբլիթ | 653,00 | 990,00 |
| e) olio vegetale / բուսական յուղ | 800,00 | 1.110,00 |

երկու բեռնարկղների՝ N. MSCU922743.4, MSCU983654.9 տրանսպորտային ծախսը կազմել է 9.000,00 (եվրո):

Կամիլլիանների Միաբանության «Ս. Կամիլլո»
Բարեգործական Հիմնադրամի Տնօրեն՝
Հ. Մարիո Կուկկարոլլո

19.05.2014թ.


Sede legale: c/o Ospedale "*Redemptoris Mater*"
2801 ASHOTSK (Shirak)
Tel. e Fax: 00374.10.280 290 - 00374.245.21 722
E-mail: camillians_ashotsk@web.am - Cod.fisc. 05806438
redemptorismaterashotsk@yahoo.it

Իրավաբանական հասցե՝ «Տիրամայր Նարեկի» Հիվանդանոց
2801 ԱՇՈՑՔ (Շիրակ)
Հեռ. և Ֆաքս. 00374.10.280 290 - 00374.245.21 722
E-mail: camillians_ashotsk@web.am - Հարկային կոդ 05806438
redemptorismaterashotsk@yahoo.it

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 395 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-306-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-2/6415-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5180-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» N Մ-306-Ա որոշման 1-ին կետում «0.5 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «11 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 396 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/6127-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ԴԴ/22/3701-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 23-ի N ՎՄ/3-4/4835 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները, լվացող միջոցները և դեղորայքը (20 տեղ, 4,485 կգ ընդհանուր քաշով, 76,339.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական ծրագրերի զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

15/15.8/7445-14
20.05.2014թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 397 - Ա**

**քաղ. Երևան**

## «ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 3/3.8-2/6665-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2870-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5346-14 և Արմավիրի մարզպետարանի 2014 թվականի ապրիլի 30-ի N 01/04.2/1467-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող 600,000,000 դրամ արժողությամբ «Էջմիածնում՝ Մայր Աթոռին կից մանկական այգու և կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Երևան իմ սեր» հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

3. «Երևան իմ սեր» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե , Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԺՄ-5/3

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն

...շակ Կարապետյան

«...» ապրիլի 2014թ.

«Էջմիածնում՝ Մայր Աթոռին կից մանկական այգու և կենտրոնի կառուցման» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներից Էջմիածին քաղաքում՝ Մայր Աթոռին հարակից տարածքում՝ Մովսես Խորենացում փողոցի հարևանությամբ ստեղծել մանկական այգի և կառուցել մանկական կենտրոն: Այգին տեղակայվելու է Մայր Աթոռի և Էջմիածնի Մովսես Խորենացու փողոցի միջակայքում, շենքում գործելու է մանկական կենտրոն, ուր իրականացվելու են հոգևոր, ուսուցողական, սոցիալ մշակութային ծրագրեր: Մանկական այգին և կենտրոնը որպես սեփականություն հանձնվելու են Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Երևան իմ սեր» հիմնադրամի նվիրատուներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |
| 5. | Ծրագրի իրականացման | Հայաստանի Հանրապետություն, ք. Էջմիածին, Մայր Աթոռին հարակից տարածք |

1

| | | |
|---|---|---|
| | վայրը և բնագավառը | Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառը |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 600 000 000 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Հայաստանյաց առաքելական եկեղեցին, Էջմիածնի և հարակից բնակավայրերի կարիքավոր ընտանիքների երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն սկսվելու է 2014թ. ապրիլի 1 5-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2015 թ. դեկտեմբեր ամիսը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 3000 քմ ընդհանուր մակերեսով մանկական այգի՝ խնամված ծառուղիներով, շատրվաններով և ջրավազաններով: Մայր աթոռի և մանկական այգու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական կենտրոն, որտեղ իրականացվելու են արվեստի, մշակույթի, կրթական և գեղագիտական նշանակության տարբեր ծրագրեր: Կառուցվելիք շենքերի շուրջ ևս նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ:<br>Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով<br>ա) Ճարտարապետական նախագծերի (էսքիզային, Ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2014 մարտ – մայիս ամիսների ընթացքում)<br>բ) ընդհանուր շինարարության աշխատանքները (2014 մայիս - 2015 դեկտեմբեր ամիսների ընթացքում): Անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ մոտ 600 000 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 600 000 000 ՀՀ դրամ:<br>• Ճարտարապետական նախագծերի՝ վերականգնվող այգու և կառուցվելիք շենքի էսքիզային, Ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում: |



| | | |
|---|---|---|
| | ծավալները և նախատեսվող գինը | • Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային և շինարարական աշխատանքներ:<br>• Շինանյութերի և ներքին հարդարման և կահավորանքի ներմուծում:<br>• Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազի մատակարարման և այլ համակարգերին միացման աշխատանքներ,<br>• Հեղինակային հսկողության և տեխնիկական վերահսկողության իրականացում<br>• Խորհրդատվական, աուդիտորական ծառայություններ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չկան: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• Տարեկան, ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |

15/15.8/7786-14
20.05.2014

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 398 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6780-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5412-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պարաֆին (467 տեղ, 15,080 կգ ընդհանուր քաշով, 25,536.84 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է և անհատույց հանձնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմաձուլարանին՝ ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 400 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6777-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-45413/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերար Կարեն Առաքելյանի միջոցներով՝ բժիշկ ստոմատոլոգների և կլինիկական օրդինատորների անվճար դասընթացների կազմակերպման նպատակով «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ստոմատոլոգիական էնդոդոնտիկ միկրոսկոպի (իր օժանդակ մասերով՝ մեկ տեղ, 131 կգ ընդհանուր քաշով, 12,144.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 680 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպում-ներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/PS.8/7380-14

19.05.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 401 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6782-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 8-ի N ՎՄ/3-4/5552-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել գերմանական ABS Arbeiter-Sanariter-Bund բարեգործական կազմակերպության միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զորավար Անդրանիկի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցի հասցեով ստացված 200 համակարգիչի (լրակազմով՝ 6 տեղ, 3,500 կգ ընդհանուր քաշով, 8000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄԾՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է դպրոցում առանձին համակարգչային դասարան բացելու և բոլոր դասասենյակները համակարգիչներով ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զորավար Անդրանիկի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանապետության կրթության և գիտության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հնարապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.2/7455-14

20.05.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 402 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N Մ-1311-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Արագիլ» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 25 -ի N 3/3.8-2/6255-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25 -ի N ՎՄ/3-4/4921-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արագիլ» հիմնադրամի կողմից ձեռք բերված դեղորայքը (20 տեղ, 181 կգ ընդհանուր քաշով, 124,694.55 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 16-ի «Արագիլ» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերարտադրողական բժշկության» ծրագրի մասին» N Մ-1311-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմի[illegible]

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7482-14

20.05.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 403 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6908-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5710-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ցանցային սարքավորումները (մեկ տեղ, 97 կգ ընդհանուր քաշով, 19,101 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ ավագ դպրոց» ծրագրի մասին N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7508-14
20.05.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 404 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1076-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 3/3.8-2/6697-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5350-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի նոյեմբերի 15-ի Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն Սիրիահայերին» N Մ-1076-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01828355) 2014 թվականի ապրիլի 25-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 12,571,870 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7505-14
20.05.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 405 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7095-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5706-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի փետրվարի 6-ի Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթներս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2014 թվականի մայիսի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ուսումնական նյութերի տպագրում՝ 9,237.700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7509-14

20.05.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 406 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7324-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 26-ի N ՎՄ/3-4/4966-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական աջակցության տրամադրում» N Մ-291-Ա (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-095-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի ապրիլի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի մատակարարում՝ 1,624,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Աշտարակ Կաթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05001995) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3,2 տոկոս յուղայնությամբ կաթի մատակարարում՝ 439,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7484-14
20.05.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 407 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7094-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5705-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 3,056.164 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7507-14
20.05.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 408 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 3/3.8-2/6694-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5347-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մել սթոնե» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02610222) 2014 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար սույն պայմանագրի N 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսված բազրիքի տուֆե կլոր ձևավոր կանգնակի մատակարարում՝ 1,014,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մել սթոնե» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02610222) 2014 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար սույն պայմանագրի N 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսված արտաքին երեսապատման համար տուֆե հղկված սալերի մատակարարում՝ 1,060,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գիզա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00851914) 2014 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար սույն պայմանագրի N 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսված ջրամեկուսացման նյութերի մատակարարում՝ 5,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Վարատ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 03510861) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար սույն պայմանագրի N 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսված գաջի մատակարարում՝ 4,050,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գիպերոն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 04217677) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար սույն պայմանագրի N 1 հավելվածի տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրական հաղորդալարերի մատակարարում՝ 2,055,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15.8/7506-14
20.05.2014թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 409 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-668-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի ապրիլի 10-ի N 204 գրությունն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/6050-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4581-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-668-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «1,622,891.860 դրամ» բառերը փոխարինել «1,672,123.790 դրամ» բառերով.

2) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «1,712,891.860 դրամ» բառերը փոխարինել «1,762,123.790 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 դեկտեմբեր 2012 թ.» բառերը փոխարինել «01 դեկտեմբեր 2014 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 410 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 26.07.2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2014 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի մարտի 7-ի N 1/01.3/10415-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 24-ի N 3/3.8-2/4235-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 2-ի N 03/1779-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 24-ի N ՎՄ/3-4/3209-14, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի մարտի 24-ի N 01/21.1/939-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 8,936,000 դրամ ընդհանուր արժեքով «Հարավային Կովկասի անդրսահմանային միացյալ քարտուղարության և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 26.07.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին և Աղավնավանքի համայնքի ղեկավարին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
Է. Փիրումյան
<<24>> փետրվարի 2014թ.

## ԾՐԱԳԻՐ

**Հարավային Կովկասում Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության և <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի միջև 26.07.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Դիլիջան» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված ազգային պարկում էկոտուրիզմի զարգացման բարելավմանը, ինչպես նաև «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հարավային Կովկասում Անդրսահմանային միացյալ քարտուղարություն: Հասցե՝ Վրաստան, Թբիլիսի 0112, Դավիթ Աղմաշենեբելի պողոտա 150 շ, 7-րդ հարկ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշ մարզ, ք.Դիլիջան<br><<Դիլիջան» ազգային պարկ>> ՊՈԱԿ էկոտուրիզմի զարգացման բարելավում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Անդրսահմանային Միացյալ Քարտուղարությունից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Դիլիջան» ազգային պարկ » ՊՈԱԿ-ի «Ամերիա Բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ **8936.0 հազ.դրամ)**: Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ազգային պարկ » ՊՈԱԿ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 03.03.2014թ. – 30.08.2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության և <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի միջև 26.07.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի ծրագիր՝ 03.03.2014թ. – 30.08.2014թ. – **8936.0 հազ.դրամ**, այդ թվում՝<br>1. «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի էկոտուրիստական երթուղիների և ժամանցի կազմակերպման կետի կահավորման ու բարեկարգման աշխատանքներ-**8736.0 հազ.դրամ**<br>2. Նախագծանախահաշվարկային աշխատանքների ձեռքբերում – **200.0 հազ.դրամ:** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի էկոտուրիստական երթուղիների և ժամանցի կազմակերպման կետի կահավորման ու բարեկարգման աշխատանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **8736.0հազ.դրամ**<br>**2.** Նախագծանախահաշվարկային աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **200.0 հազ.դրամ** |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Դիլիջանի քաղաքապետարանի և Աղավնավանքի գյուղապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

<<Դիլիջան» ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Դավթյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 411 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋԵՎ 04.12.2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2014 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 1/01.3/10790-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/6093-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 03/2562-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 14-ի N ՎՄ/3-4/4580-14, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2014 թվականի ապրիլի 18-ի N 1/3/1-1/1807-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 31,614 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Հարավային Կովկասի անդրսահմանային միացյալ քարտուղարության և «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջև 04.12.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին և Վեդիի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
Է. Փիրումյան
<< 28 >> մարտի 2014թ.

# ԾՐԱԳԻՐ

**Հարավային Կովկասում Անդրսահմանային Միացյալ Քարտուղարության և <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի միջև 04.12.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված արգելոցում տեսչության և մոնիթորինգի բարելավման համար սարքավորումների ձեռք բերմանը, այցելուների համար էկոտուրիզմի արահետների բարելավմանը, Գոռավան և Խոր Վիրապ արգելավայրերի պահպանության բարելավմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հարավային Կովկասում Անդրսահմանային միացյալ քարտուղարություն: Հասցե՝ Վրաստան, Թբիլիսի 0112, Դավիթ Աղմաշենեբելի պողոտա 150 շ, 7-րդ հարկ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |

Աշխարույան

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արարատի մարզ, գ.Վեդի Կայան 79, <<Խոսրովի անտառ» պետական արգելոց >> ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի զարգացման բարելավում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է **31 614,0 եվրո**: Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Խոսրովի անտառ» պետական արգելոց » ՊՈԱԿ, Արարատի մարզ, գ. Վեդի, Կայան 79 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 04.12.2013թ.-30.12.2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրավորված **31 614 եվրոն** ծախսվելու է 15.04.2014թ.-30.12.2014թ. հետևյալ ուղղություններով, այդ թվում՝<br>1. Դաշտային սարքավորումների ձեռքբերում **-15 500 եվրո**, այդ թվում՝ |

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (եվրո) |
|---|---|---|---|
| GPS | հատ | 10 | 3 000 |
| Հեռադիտակ | հատ | 10 | 2 000 |
| Թվային նկարչական ապարատ | հատ | 4 | 1 000 |
| Անվտանգության տեսախցիկ | հատ | 4 | 2 000 |
| Կենսաբազմազանության մոնիթորինգի տեսախցիկ | հատ | 10 | 2 500 |
| Հսկողության համար նախատեսված ձիեր | հատ | 8 | 5 000 |

2. Երկու արգելավայրերի պահպանության բարելավում – **4 500 եվրո, այդ թվում՝**

Աշխարույան

<table>
<tr><td></td><td></td><td>
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը</th><th>Ընդհանուր գումարը (եվրո)</th></tr>
<tr><td>Ուղեփակոցների կառուցում /վերզինում/ և տեղեկատվության ցուցատախտակների տեղադրում</td><td>լրակազմ</td><td>2</td><td>4 500</td></tr>
</table>
3. Չորս շրջաններում այցելուներին տեղեկատվություն հաղորդող հարմարությունների ստողծում - 10 500 Եվրո, այդ թվում
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (Եվրո)</th></tr>
<tr><td>Այցելուների համար նախատեսված արահետների ստեղծում և ցուցատախտակների տեղադրում</td><td>հատ</td><td>4</td><td>10 500</td></tr>
</table>
4. Ներկայացուցչական ծախսեր - 1 114 Եվրո:
</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td><<Խոսրովի անտառ» պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի երկու արգելավայրերի պահպանության բարելավման, 4 շրջաններում այցելուներին տեղեկատվություն հաղորդող հարմարությունները ձեռք բերման և տեղադրման, դաշտային սարքավորումների տրամադրման աշխատանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)<br><br>1. Դաշտային սարքավորումների ձեռք բերքում -15 500 Եվրո,<br>2. Երկու արգելավայրերի պահպանության բարելավում- 4 500 Եվրո,<br>3. Չորս շրջաններում այցելուներին տեղեկատվություն հաղորդող</td></tr>
</table>

Աշխարյան

<table>
<tr><td></td><td></td><td>հարմարությունների տեղադրում - 10 500 Եվրո:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</td><td>Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Արարատի մարզպետարանի, ՀՀ Վեդիի քաղաքապետարանի և <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի հետ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը:</td></tr>
</table>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 412 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՊՀ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ԱՄՆ-Ի ԳԼԵՆԴԵԼ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 11-ի N 3/3.8-2/5709-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 02/2426-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 03/07-1/3769-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 28-ի N 4/E16-F6AE-415E-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից 2014 թվականներին իրականացվող՝ 32,553.15 ԱՄՆ-ի դոլար արժեքով «ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի» և ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության համագործակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01570457) 2013 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-13/67 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և



օժանդակ նյութերի ձեռքբերում՝ 12,423,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրա-պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ Կրթության և գիտության նախարարության
"Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ
ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից
.................................
«28» 03 2014թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» ՊՈԱԿ-ի
և ԱՄՆ Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության
համագործակցության

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի շրջանակներում ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ (ԵՊՀ)-և ԱՄՆ Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության (<<ՀԲԸՄ>>) կողմից հերթական անգամ նվիրաբերած գումարների հաշվին ձեռք է բերելու ինտերակտիվ գրատախտակներ (իրենց բաղադրամասերով) և այլ սարքեր, որոնք տեղադրվելու են ԵՊՀ ֆակուլտետների լսարաններում և լաբորատորիաներում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միություն<br>212-319-6383<br>55 East 59th Street<br>USA, New York, NY 10022-1112 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Երևանի Պետական Համալսարան" ՊՈԱԿ, Կենսաբանության ֆակուլտետի Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոն, բնագավառը կրթություն և գիտություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 32553.15 ԱՄՆ դոլար (13187932.10 դրամ փոխանցման օրվա փոխարժեքով (1 ԱՄՆ դոլարը = 405.12 դրամ)), |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01,01.2014թ-ից մինչև 30.07.2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ.-ի հունվար - հուլիս:<br>1. ինտերակտիվ գրատախտակների (իրենց բաղադրամասերով) գնում Հայաստանի Հանրապետությունում, 12423000 դրամ,<br>2. Գիտական և լաբորատոր սարքերի ներմուծում արտերկրներից, 764900 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. ինտերակտիվ գրատախտակների (իրենց բաղադրամասերով) գնում Հայաստանի Հանրապետությունում, 12423000 դրամ: Այդ թվում՝<br>15 հատ ինտերակտիվ «Dual User Interactive Whiteboard Smart Board SB-480» գրատախտակներ երկու հոգու միաժամանակ աշխատելու հնարավորությամբ՝ իրենց բաղադրամասերով (Մոբայլ թվային պրոեկտոր Mitsubishi EX-220U + Առաստաղային կախիչ պրոեկտորի համար (Universal ceiling mount 60-110 cm)+ Դյուրակիր ուժեղացուցիչ-բաշխիչ(Equip 2-port RGB Amplifier/Splitter1/2, 450 MHZ, USB Y-մալուխի միջոցով) + Մալուխ RGB Connection cable, 15P D-Sub M/M. 15 m w.o. pin 9, w. DDC Signal, Style:M/M + Մալուխ - USB 2.0 active extension cable16' (5 m), up to 4 of this cables can be linked together:<br><br>2. Գիտական և լաբորատոր սարքերի ներմուծում արտերկրներից, 764900 դրամ: Այդ թվում՝<br>- Дозиметр "Арбитр" - մեկ հատ, 35500 ռուբլի (~ 418900 դրամ)<br>- Дозиметр РАДЭКС РД 1706 - մեկ հատ, 19400 ռուբլի (~ 228920 դրամ) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Պետեկամուտների կոմիտե, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, սարքեր վաճառող տեղական և արտասահմանյան ֆիրմաներ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Իրականացվում է ԵՊՀ գիտական քաղ.-ն, միջազգ-ին համագործակցության գծով պրոռեկտոր՝ Գ. Գևորգյանի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 4/3-Ա**

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2014 – 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՍ՝ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» (յոթերորդ փուլ) ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 16-ի N 3/3.8-2/5970-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 18 -ի N 02/2564-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N ԴԴ/22/3678-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 17-ի N ՖԲ/ԱնՄ-4/2560 -14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4579-14 ու Երևանի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 18-ի N 02/10-22285-հ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի ապրիլի 15-ի N 101/104.3.2/1757-14, Հայաստանի Հանրապետության Տավուշի 2014 թվականի ապրիլի 16-ի N 01/14.1/1218-14 մարզպետի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վրացական 9, բն. 44, ՀՎՀՀ՝ 00074765) 2014 թվականի ապրիլից մինչև 2016 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 900,000,000 դրամ ընդհանուր արժեքով «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական ակնաբուժության նախագիծ» (ՀԱՆ) բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2014 թվականի մարտի 28-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բժշկական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05507136) 2014 թվականի մարտի 3-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 3-ից մինչև 2016 թվականի 20-ն ընկած ժամանակահատվածում բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Լիոն Փրինթինգ Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829254) 2014 թվականի մարտի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդհանուր



հետազոտության հարցաթերթիկների և նյութերի տպագրում՝ 2,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100064) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հանրակրթական ֆիլմերի և իրազեկման հոլովակների նկարահանման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մաստերկոմպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS04/2009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

6) «Օրանժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) կնքված՝ N 2316125 և 2699016 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) կնքված՝ N 027/30/08/2012 պայմանագրի 2014 թվականի փետրվարի 28-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» ցանցի մալուխային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում՝ 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի ու ՀԱՆ-ի ակնաբուժական կրթական կենտրոնի գրադարանի «Ինտերնետ» ցանցի ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 16-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում գրասենյակի ջրամատակարարում՝ 120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08.13.1836 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 6303 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

12) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2010 թվականի մարտի 9-ին կնքված՝ պայմանագրի 2014 թվականի մարտի 31-ի N 02 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀԱՆ-ի գրասենյակի հաշվապահական ծառայությունների մատուցում՝ 5,040,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«*Հայկական Ակնաբուժության Նախագիծ» Բարեգործական հիմնադրամ*» կազմակերպության

նախագահ *Հայաստանյան գրասենյակի տնօրեն* ... կողմից

«28» ... 2014..թ.

«ԼՈՒՅՍ ՀԱՅԻ ԱՉՔԵՐԻՆ» ծրագիր / VIIՓՈՒԼ

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել ձեռք բերովի կուրությունը բնակչության շրջանում, հասանելի և մատչելի դարձնել ակնաբուժական ծառայությունները և բուժօգնությունը, աջակցել սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը: Մասնավորապես<br>1. ՀՀ Առողջապահության նախարարության առաջարկով հիմնել և սարքավորումներով ապահովել տարածաշրջանային ակնաբուժական կենտրոններ Տավուշի և Լոռու մարզերում<br>2. Հիմնել մանկական կուրության կանխարգելման կենտրոն<br>3. Ապահովել ակնային հիվանդությունների կանխարգելում/ հետազոտություն, բուժում /վիրահատություն Աչքի շարժական հիվանդանոցի, նորաստեղծ ակնաբուժական կենտրոնների միջոցով և անհասության ռետինոպաթիայի նորածնային սքրինինգի և բուժման ծրագրի շրջանակներում<br>4. Բարելավել ծառայությունների որակն ակնաբուժության բնագավառում մասնագիտական վերապատրաստման/դասընթացների միջոցով՝ ստեղծել առցանց դասընթացներ և թեստեր տեղական ակնաբույժների, ակնաբուժական բուժքույրերի, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի, նեոնատալ բուժքույրերի համար ինչպես նաև պատրաստել մասնագետներ նորաստեղծ ակնաբուժական կենտրոնների համար:<br>5. Օժանդակել բնակչության շրջանում ակնային հիվանդությունների, բուժման և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտության մասին տեղեկատվության տարածմանը և իրազեկության բարձրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսում ենք ստանալ ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ |
| 3. | Բարեգործը | Հիմնադրամի ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրն է ԱՄՆ-ում գտնվող ՙՀայկական ակնաբուժության նախագիծ՚ բարեգործական ընկերությունը (The Armenian Eye Care Project Corporation) ՝ որը հանդիսանում է Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ- ի հիմնադիրը: 2014 թ. Բուժօգնության և առցանց դասընթացների ծրագրերը համաֆինանսավորվում նաև Օրանժ հիմնադրամի կողմից: Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի ստեղծման և անհաս ռետինոպաթիայի ծրագիրը համաֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ-ի և Գերաուեր Շտիֆտունգ ԲՀ-ի (Շվեյցարիա) կողմից |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՙՀայկական Ակնաբուժության Նախագիծ՚ բարեգործական հիմնադրամը, ՀՎՀՀ՝ 00074765, իրավաբանական հասցե՝ Վրացական 9, բն. 44, իրական հասցե՝ Այգեստան, 5-րդ փ., 7-րդ տուն հեռ.: 55 90 68; 577611: |
| 5. | Ծրագրի | Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական ոլորտներին և ընդգրկում է Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, |

| | | |
|---|---|---|
| | իրականացման վայրը և բնագավառը | Սյունիքի, Կոտայքի, Տավուշի, Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու մարզերը, Երևան քաղաքի սոցիալական հաստատությունները, Երևանի և մարզերի ծննդատների ինտենսիվ թերապիայի բաժանմունքները: Տարածաշրջանային կենտրոնները ստեղծվելու են Տավուշի և Լոռու մարզերում՝ բժշկական կենտրոնների տարածքում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր կողմնորոշիչ արժեքը՝ 900,000,000 ՀՀ դրամ |

| Եռամսյակ | ա/տարածաշրջանային ակնաբուժական կենտրոնների ստեղծում | բ/հետազոտություն/բուժում/վիրահատություն | գ/մասնագիտական վերապատրաստում | դ/հանրային իրազեկություն/տեղեկատվություն | Վարչական ծախսեր | ԸՆԴՀԱՆՈՒՐԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 2014 | | | | | | |
| Ապրիլ-հունիս | | 29,291,000 | 378,000 | 1,805,000 | 2,246,000 | 33,720,000 |
| հուլիս-սեպտեմբեր | 84,420,000 | 43,936,500 | 567,000 | 2,707,500 | 3,369,000 | 135,000,000 |
| հոկտեմբեր-դեկտեմբեր | 84,420,000 | 38,078,300 | 491,400 | 2,346,500 | 2,919,800 | 128,256,000 |
| ընդամենը 2014 | 168,840,000 | 111,305,800 | 1,436,400 | 6,859,000 | 8,534,800 | 296,976,000 |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | *153,000,000* | 110,770,000 | 1,379,400 | 5,320,000 | 4,734,800 | 275,204,200 |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | *15,840,000* | 535,800 | 57,000 | 1,539,000 | 3,800,000 | 21,771,800 |
| 2015 | | | | | | |
| հունվար-մարտ | | 29,291,000 | 378,000 | 1,805,000 | 2,246,000 | 33,720,000 |
| Ապրիլ-հունիս | 112,560,000 | 41,007,400 | 529,200 | 2,527,000 | 3,144,400 | 159,768,000 |
| հուլիս-սեպտեմբեր | 112,560,000 | 41,007,400 | 529,200 | 2,527,000 | 3,144,400 | 159,768,000 |
| հոկտեմբեր-դեկտեմբեր | 56,280,000 | 32,220,100 | 415,800 | 1,985,500 | 2,470,600 | 93,372,000 |
| ընդամենը 2015 | 281,400,000 | 143,525,900 | 1,852,200 | 8,844,500 | 11,005,400 | 446,628,000 |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | *255,000,000* | 142,835,000 | 1,778,700 | 6,860,000 | 6,105,400 | 412,579,100 |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | *26,400,000* | 690,900 | 73,500 | 1,984,500 | 4,900,000 | 34,048,900 |
| 2016 | | | | | | |
| հունվար-մարտ | 112,560,000 | 38,078,300 | 491,400 | 2,346,500 | 2,919,800 | 156,396,000 |
| ընդամենը 2016 | 112,560,000 | 38,078,300 | 491,400 | 2,346,500 | 2,919,800 | 156,396,000 |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | *102,000,000* | 37,895,000 | 471,900 | 1,820,000 | 1,619,800 | 143,806,700 |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | *10,560,000* | 183,300 | 19,500 | 526,500 | 1,300,000 | 12,589,300 |
| Ծրագրի ամբողջ գումարը | 562,800,000 | 292,910,000 | 3,780,000 | 18,050,000 | 22,460,000 | 900,000,000 |
| *ծախսեր՝ որոնց համար հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում* | 510,000,000 | 291,500,000 | 3,630,000 | 14,000,000 | 12,460,000 | 831,590,000 |
| ծախսեր՝ որոնց համար չի հայցվում է ԱԱՀ և մաքսատուրքերից ազատում | 52,800,000 | 1,410,000 | 150,000 | 4,050,000 | 10,000,000 | 68,410,000 |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ մարզերի և Երևանի բնակչությունը՝ աղքատ, անապահով ընտանիքները /ըստ ընտանեկան նպաստների համակարգի |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ինտերնետային կաբելային կապի ապահովում և տեխնիկական սպասարկում - արժեքը՝ 500,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ թիվ 027/30/08/2012 պայմանագրի Յուքոմ ՍՊԸ-ի (ք. Երևան, Իր. Հասցե՝ ք Երևան, Տերյան 19, բն. 4, գործ. Հասցե՝ Սայաթ-Նովա 40/1 ՀՎՀՀ 00024873) հետ և 2014 թ. Փետրվարի 28-ին կնքված համաձայնագրի<br>• Համակարգչային տեխնիկայի վերանորոգման և սպասարկման ծառայություն - արժեքը 800,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ –ի ըստ 2009թ. օգոստոսի 1-ին կնքված MCS 04 /2009 պայմանագրի ,Մաստերկոմպ ՍՊԸ (ք. Երևան, Թամանյան 2/33, ՀՎՀՀ 01566751 )<br>• Հեռախոսային կապ՝չորս քաղաքային գիծ ըստ 2005թ-ին կնքված N 010510380 պայմանագրի, *Արմենթել* ( ք. Երևան, ՀՎՀՀ 02500052) հետ, ընդհանուր արժեքը՝ 1,500,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br>• Հեռախոսային կապ՝ բջջային , ըստ Օրանժ ՓԲԸ-ի (Երևան, Գ. Լուսավորչի 9, ՀՎՀՀ 00098599) 2699016 պայմանագրի , արժեքը՝ 1,500,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br>• ՀԱՆ-ի գրասենյակի ջրամատակարարում՝ 120,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ Երևանի "**Երևան Ջուր** " ՓԲԸ –ի հետ 2009 թ. ապրիլի 4ին կնքված 07-098-7 պայմանագրի (ք. Երևան, Աբովյան 66 ա ՀՎՀՀ 01555351):<br>• ՀԱՆ -ի գրասենյակի գազամատակարարում՝ 2,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ "ՀայՌուսգազարդ" ՓԲԸ –ի Երևանի գգմ-ի հետ 2013 թ. հուլիսի 7- ին կնքված պայմանագրի N.015.08.13.1896 (ք. Երևան, Չարենցի 141ա ՀՎՀՀ 0004631):<br>• ՀԱՆ -ի գրասենյակի Էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1,000,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ "Հայաստանի Էլեկտրական ցանցեր" ՓԲԸ-ի "Արևմուտք" մասնաճյուղի հետ 2008 թ. հունվարի 24 ին կնքված N 6303 պայմանագրի (ք. Երևան, 015205882, Արշակունյաց 17ա ՀՎՀՀ 015205882):<br>• ՀԱՆ-ի գրասենյակի հաշվապահական ծառայության `5,040,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի ըստ ՛Բիզնես Քլոնսալթ՛ ՓԲԸ-ի (ք. Երևան, Սայաթ-նովա 19, ՀՎՀՀ 01538458) հետ կնքած 2014 թ. ապրիլի մեկից ուժի մեջ մտնող h. 02 համաձայնագրի<br><br><u>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերի ընդհանուր արժեքն է՝ 22,460,000 ՀՀ դրամ:</u> |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում ՀԱՆ-ը համագործակցում է ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԲԾՀՀ, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ առողջապահության նախարարությունը համակարգում է ծրագիրը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրում է անապահով ընտանիքների ցուցակները: Աշխատանքները սկսելուց առաջ և ընթացքում, ՀԱՆ-ը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ՝ բնակչությանը ծրագրի պայմաններին իրազեկելու, ժամանակացույցը կազմելու, շահառուների ցուցակները վերստուգելու, տվյալներ և տեղեկատվություն փոխանակելու, ակնաբուժական գործունեությունը իրականացնելու համար: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է «Հայկական Ակնաբուժության Նախագիծ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի/ԱՄՆ, անհատ բարերարների, ՀՀ ԿԲԾՀՀ, ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից: Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են էլ-փոստով հիմնադիր բարերարին, եռամսյակային հաշվետվությունները՝ ՀՀ ԿԲԾՀՀ հանձնաժողովին: Մարզում ծրագիրը ավարտելուց հաշվետվությունները են ներկայացվում ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, և համապատասխան մարզպետարաններին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 414 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՆՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՋՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 15-ի N 3/3.8-2/5903-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 16-ի N 02/2495-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 07/07.1/2011-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 15-ի N ԿՄ/3-4/4532-14 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի ապրիլի 11-ի N 101/104.3.2/1704-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 4,249,300 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի անասունների խնոցների կառուցում, ջրային ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 139/WS/14/07/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշեն համայնքի խմելու ջրագծի անցկացման և անասունների խնոցների կառուցման աշխատանքների իրականացում՝ 4,249,300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«31» մարտի 2014.թ.

«Լոռու մարզի Նորաշեն համայնքի անասունների խմոցների կառուցում, ջրային ցանցի վերակառուցում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Իրականացնել Լոռու մարզի Նորաշեն համայնքի անասունների 6 խմոցի կառուցում և ջրային ցանցի վերակառուցում. d 50 մմ խողովակի 900գ/մ հատվածի կառուցում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | Ավստրիական Կարիտաս բարեգործական կազմակերպություն Wichnergasse 22, A-6800 Feldkirch, Austria |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>Գյումրի, Դ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն,<br>ՀՎՀՀ՝ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռու մարզի Նորաշեն համայնք<br>բնագավառը՝ բարեգործական ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 4.249.300 դրամ առանց ԱԱՀ-ի |
| 7 | Բարեգործություն ստացողը | Լոռու մարզի Նորաշեն գյուղի բնակիչները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 7 ամիս, ապրիլ 20- նոյեմբերի 20, 2014 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 900 գ/մ d=50 մմ-ոց խողովակաշարերի մոնտաժում, անասունների համար խմոցների կառուցում: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 4.249.300 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծրագիրն իրականացվելու է 2014թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 900 գ/մ d=50 մմ-ոց սինթետիկ խողովակներ, ձևավոր մասեր, կպատրաստվեն մետաղյա խմոցներ, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք:<br>Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 4.249.300 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Լոռու մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանն ու համայնքապետարանը ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 415 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 15-ի N 3/3.8-2/5904-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 16-ի N 02/2494 -14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 07/07.1/2012-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4575-14 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 14-ի N 01/ 1669-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 7,326,100 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթի համայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի մարտի 26-ին կնքված N 139/WS/14/07/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթի գյուղում խմելու ջրի ջրագծերի անցկացման աշխատանքների իրականացում՝ 6.639,100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարայանի կողմից
«31» մարտի 2014թ.

## «Շիրակի մարզի Քեթի Յամայնքի ներքին ջրային ցանցի վերակառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Իրականացնել խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում. d 50 խողովակի 2000 գ/մ հատվածի փոխում նորով, 5 դիտահորի պատրաստում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործ | Ավստրիական Կարիտաս բարեգործական կազմակերպություն<br>Wichnergasse 22, A-6800 Feldkirch, Austria |
| 4 | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարիտաս ԲՀԿ<br>Գյումրի, Յ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՅՎՅՅ՝ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզի Քեթի գյուղ<br>բնագավառը՝ բարեգործական ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 7.326.100 ՀՀ դրամ, որից 687.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 6.639.100 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շիրակի մարզի Քեթի համայնքի բնակիչները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 7 ամիս, ապրիլ 20- նոյեմբերի 20, 2014 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2000 գ/մ d=50 մմ-ոց խողովակաշարերի մոնտաժում: Ծրագիրն իրականացվելու է 2014թ. ապրիլ-նոյեմբեր ընկած ժամանակահատվածում:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 7.326.100 դրամ, որից 687.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 6.639.100 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 2000 գ/մ d=50 մմ-ոց սինթետիկ խողովակներ, ձևավոր մասեր, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ.ապրիլ-նոյեմբեր ամիսների ընթացքում:<br>Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 7.326.100 ՅՅ դրամ, որից 687.000 դրամը՝ համայնքային ներդրում, իսկ 6.639.100 ՀՀ դրամը ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարն է:<br>Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանն ու համայնքապետարանը ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները:<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ- 416 -Ա
քաղ. Երևան

## «ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2/5808-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 17-ի N ՖԲ/ԱbՄ-4/2559-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 15-ի N ՎՄ/3-4/ 5433-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 14-ի N 01/1670-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության կողմից ուղարկված՝ «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղի հասցեով ստացված բեռի (217 տեղ, 32,800 կգ ընդհանուր քաշով, 6000 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Շիրակի» Տ/Մ) ներմուծումը:

2. «Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգործական կազմակերպության Գյումրու մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Շիրակի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն» բարեգ. կազմ. Գյումրու մասնաճյուղի տնօրեն Արամ Խաչատրյանի կողմից
26.03.2014թ.

| ՀՀ | Անվանում | Տեղ | Քանակ | Նետտո քաշ /կգ/ | Բրուտտո քաշ /կգ/ | Շահառուներ | Արժեքը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լինոլիում | 52 | 1970 մ$^2$ | 7500 | 7574 | 1.<Գյումրիի Ֆոտոն վարժարան> ՊՈԱԿ -430 մ$^2$ | 325620 |
| | | | | | | 2.<Գյումրիի պետական բժշկական քոլեջ> ՊՈԱԿ-300 մ$^2$ | 227178 |
| | | | | | | 3.Գյումրիի 'Ընտանիք" ԲՀԿ - 400 մ$^2$ | 302904 |
| | | | | | | 4.<Տիրամայր Հայաստանի Կուսաստան> - 300 մ$^2$ | 227178 |
| | | | | | | 5.ԼՂՀ Ասկերանի շրջան, Հարավ համայնքի մանկապարտեզ-140 մ$^2$ | 106016 |
| | | | | | | 6. <Հայ Միասնության Խաչ> ԲՄՀԿ- 200 մ$^2$ | 151452 |
| | | | | | | 7. <Երևանի թիվ 1 տուն ինտերնատ> ՊՈԱԿ-100 մ$^2$ | 75726 |
| | | | | | | 8. Գորիսի թիվ 5 մանկապարտեզ-100մ$^2$ | 75726 |
| 2. | Հարթեցնող ցեմենտ | 3 | 605 h | 15125 | 15200 | 1.<Գյումրիի Ֆոտոն վարժարան> ՊՈԱԿ- 4650 կգ | 447871 |
| | | | | | | 2. <Գյումրիի պետական բժշկական քոլեջ> ՊՈԱԿ-2600 կգ | 250422 |
| | | | | | | 3. Գյումրիի 'Ընտանիք" ԲՀԿ -3300 կգ | 317844 |
| | | | | | | 4. <Տիրամայր Հայաստանի Կուսաստան> -2600 կգ | 250422 |
| | | | | | | 5.ԼՂՀ Ասկերանի շրջան, Հարավ համայնքի մանկապարտեզ-1075 կգ | 103540 |
| | | | | | | 6. Գորիսի թիվ 5 մանկապարտեզ- 900 կգ | 86685 |
| 3. | Ցեմենտի առաջնային զրունտ | 1 | 20 h | 550 | 562 | 1.<Գյումրիի Ֆոտոն վարժարան> ՊՈԱԿ-140կգ | 13035 |
| | | | | | | 2. <Գյումրիի պետական բժշկական քոլեջ> ՊՈԱԿ -110 կգ | 10241 |
| | | | | | | 3. Գյումրիի 'Ընտանիք" ԲՀԿ -135կգ | 12569 |
| | | | | | | 4. <Տիրամայր Հայաստանի Կուսաստան> -105 կգ | 9776 |
| | | | | | | 5. ԼՂՀ Ասկերանի շրջան, Հարավ համայնքի մանկապարտեզ-35կգ | 3259 |

5/12.16

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 6. Գորիսի N 5 մանկապարտեզ-25 կգ | 2327 |
| 4. | Խաղահրապարակի մետաղական ցանց | 11 | 396 մ$^{2}$ | 1760 | 1760 | 1.Ստեփանակերտի Ֆ. Ռոշբլուանի անվան խաղահրապարակ-144 մ$^{2}$ | 144844 |
| | | | | | | 2.Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղում կառուցվելիք խաղահրապարակ - 252 մ$^{2}$ | 253477 |
| 5. | Խաղահրապարակի վերին ցանց | 2 | 706 մ$^{2}$ | 202 | 210 | 1. <Տիրամայր Հայաստանի Կուսաստան>- 426 մ$^{2}$ | 74102 |
| | | | | | | 2.Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղում կառուցվելիք խաղահրապարակ - 280 մ$^{2}$ | 48705 |
| 6. | Սպորտային խաղերի ցանց | 1 | 5 հ | 15 | 17 | 1.<Տիրամայր Հայաստանի Կուսաստան>-3 հ | 3882 |
| | | | | | | 2. Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղում կառուցվելիք խաղահրապարակ -2 հ | 2588 |
| 7. | Ցանցի պողպատե լար | 1 | 2100 գծմ | 200 | 200 | 1.Ստեփանակերտի Ֆ. Ռոշբլուանի անվան խաղահրապարակ-600գծմ | 36543 |
| | | | | | | 2.<Տիրամայր Հայաստանի Կուսաստան>-700 գծմ | 42633 |
| | | | | | | 3.Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղում կառուցվելիք խաղահրապարակ-800գծմ | 48723 |
| 8. | Ցանցի աքսեսուարներ | 1 | | 38 | 39 | 1.Ստեփանակերտի Ֆ. Ռոշբլուանի անվան խաղահրապարակ-12 կգ | 4168 |
| | | | | | | 2. <Տիրամայր Հայաստանի Կուսաստան>-12 կ գ | 4168 |
| | | | | | | 3.Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղում կառուցվելիք խաղահրապարակ - 14 կգ | 4863 |
| 9. | Խաղահրապարակի արհեստական ծածկույթ | 1 | 227 մ$^{2}$ | 2075 | 2085 | <Երևանի թիվ 1 տուն ինտերնատ> ՊՈԱԿ | 361754 |
| 10. | Մանկական պլաստմասե աթոռ | 30 | 30 հ | 60 | 60 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 19878 |
| 11. | Պիկնիկի սեղան պլաստմասե /6 հատ/ | 6 | 6 հ | 60 | 66 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 10101 |
| 12. | Մանկական մահճակալ պլաստմասե /30 հատ/ | 11 | 30 հ | 165 | 176 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 93052 |
| 13. | Աթոռ մետաղյա | 14 | 14 | 56 | 56 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 18555 |
| 14. | Սահարան պլաստմասե | 1 | 1 | 35 | 37 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 4695 |
| 15. | Մանկական ճոճանակ (ձի) պլաստմասե /3 հատ/ | 3 | 3 | 12 | 12 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 2292 |
| 16 | Մանկական երկանիվ հեծանիվ | 7 | 7 | 30 | 30 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 9379 |
| 17. | Մանկական խաղ(կեգլի) | 2 | 2 | 4 | 4 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 2443 |
| 18. | Հաշմանդամի սայլակ | 1 | 1 | 15 | 15 | <Հաշմանդամություն ունեցող անձանց Արմինե> ՀԿ | 11973 |
| 19. | Քայլակ | 1 | 1 | 2 | 2 | <Հաշմանդամություն ունեցող անձանց Արմինե> ՀԿ | 1221 |
| 20. | Ջրելու ռետինե խողովակ | 4 | 60 գծմ | 18 | 18 | SPFA-ի հովանավորված ընտանիքներ | 12124 |
| 21. | PVC հատակի ծածկույթ | 1 | 760 մ$^{2}$ | 1795 | 1815 | 1. <Գյումրիի Ֆոտոն վարժարան> ՊՈԱԿ- 460 մ$^{2}$ | 185148 |
| | | | | | | 2. Գյումրիի 'Ընտանիք" ԲՀԿ- 300 մ$^{2}$ | 120749 |
| 22. | Վինիլ լամինատ | 1 | 220 մ$^{2}$ | 800 | 820 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնապատ համայնքի երաժշտական դպրոց | 103647 |
| 23. | Ֆրեզերային հաստոց օգտագործված | 5 | 5 հ | 1294 | 1294 | Գյումրիի "Ընտանիք" ԲՀԿ | 206363 |
| 24. | Ձեռքի աշխատանքային գործիքներ | 1 | 5 հ | 37 | 37 | SPFA-ի Գյումրիի գրասենյակ | 29906 |
| 25. | Երեսպատման սալիկ | 1 | 2 մ$^{2}$ | 37 | 39 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 6476 |
| 26. | Կարի մեքենա | 1 | 1 հ | 12 | 12 | ԼՂՀ Ասկերանի շրջանի Հարավ համայնքի մանկապարտեզ | 6213 |
| 27. | Կտոր տրիկոտաժե | 19 | 19 արկղ | 250 | 261 | <Հաշմանդամություն ունեցող անձանց Արմինե> ՀԿ | 32982 |
| 28. | Օգտագործված հագուստ | 3 | 3 արկղ | 44 | 47 | SPFA-ի բարեգործական ճաշարան | 10807 |
| 29. | Մանկական կոշիկ | 1 | 8 զույգ | 2 | 2 | SPFA-ի հովանավորված ընտանիքներ | 2342 |
| 30. | Մանկական ակնոց | 1 | 70 հ | 13 | 13 | SPFA-ի հովանավորված ընտանիքներ | 20270 |
| 31. | Գիրք | 29 | 29 արկղ | 315 | 335 | SPFA-ի Ֆրանսախոսների ակումբներ | 98402 |
| 32. | DVD սկավառակ | 1 | 10 հ | 1 | 2 | SPFA-ի Ֆրանսախոսների ակումբներ | 2902 |
| | Ընդամենը | 217 | | 32522 | 32800 | | 5042161 |

Բեռի արժեքը իր մեջ ներառում է բեռի մաքսային արժեքը 6000 ԵՎՐՈ և բեռնափոխադրման ծախսը 3000 ԵՎՐՈ, որոնց դրամային արժեքը «Շիրակի» ՏԻՏ կողմից հաշվարկվել է ըստ ԿԲ 10.02.2014թ. սահմանած փոխարժեքի /1ԵՎՐՈ=560,25 դրամ/ և ըստ 11.02.2014թ. C 66 ԲՄՅ-ի բեռի արժեքը կազմել է 5042161 դրամ /ներառյալ բեռնափոխադրման ծախսը/:

3/Ⅷ.16

5/12.16

Մասնացուցակ

5/12.16

05.02.2014 թ. թիվ 2014/33/5179 փոխադրման ամփոփագրով "Ֆրանսիայի բողոքական եկեղեցու և Հայաստանի միջև համերաշխություն"բ/կ Գյումրու մ/ճ-ի կողմից ներմուծված ապրանքների

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Քանակը ըստ չափման միավորի | Ընդհանուր քաշը բրուտտո կգ | Մաքուր քաշը նետտո կգ | Տեղերի քանակը | Ծագման երկիրը | Արժեքը հ/ա |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լինոլիում | 1970 մ² | 7574 | 7500 | 52 | Ֆրանսիա | 1970 € |
| 2 | Հարթեցնող ցեմենտ | 605 | 15200 | 15125 | 3 | Ֆրանսիա | 1210 € |
| 3 | Ցեմենտի առաջնային գրունտ | 20 | 562 | 550 | 1 | Ֆրանսիա | 40 € |
| 4 | Խաղահրապարակի մետաղական ցանց | 396 մ² | 1760 | 1760 | 11 | Ֆրանսիա | 550 € |
| 5. | Խաղահրապարակի վերին ցանց | 706 մ² | 210 | 202 | 2 | Ֆրանսիա | 200 € |
| 6. | Սպորտային խաղերի ցանց | 5 | 17 | 15 | 1 | Ֆրանսիա | 10 € |
| 7. | Ցանցի պողպատե լար | 2100 գծմ | 200 | 200 | 1 | Ֆրանսիա | 210 € |
| 8. | Ցանցի ակսեսուարներ | | 39 | 38 | 1 | Ֆրանսիա | 20 € |
| 9. | Խաղահրապարակի արհեստական ծածկույթ | 227 մ² | 2085 | 2075 | 1 | Ֆրանսիա | 455 € |
| 10. | Մանկական պլաստմասե աթոռ | 30 | 60 | 60 | 30 | Ֆրանսիա | 30 € |
| 1. | Պիկնիկի սեղան պլաստմասե | 6 | 66 | 60 | 6 | Ֆրանսիա | 12 € |
| 2. | Մանկական մահճակալ պլաստմասե | 30 | 176 | 165 | 11 | Լեհաստան | 150 € |
| 3. | Աթոռ մետաղյա | 14 | 56 | 56 | 14 | Ֆրանսիա | 28 € |
| 4. | Սահարան պլաստմասե | 1 | 37 | 35 | 1 | Լեհաստան | 5 € |
| 5. | Մանկական ճոճանակ (ձի) պլաստմասե | 3 | 12 | 12 | 3 | Իտալիա | 3 € |
| 6. | Մանկական երկանիվ հեծանիվ | 7 | 30 | 30 | 7 | Իտալիա | 14 € |
| 17. | Մանկական խաղ/կեգլի | 2 | 4 | 4 | 2 | Իտալիա | 4 € |
| 18. | Հաշմանդամի սայլակ | 1 | 15 | 15 | 1 | Ֆրանսիա | 20 € |
| 19. | Քայլակ | 1 | 2 | 2 | 1 | Ֆրանսիա | 2 € |
| 20 | Ջրելու ռետինե խողովակ | 60 գծմ | 18 | 18 | 4 | Ֆրանսիա | 20 € |
| 21. | PVC հատակի ծածկույթ | 760 մ² | 1815 | 1795 | 1 | Ֆրանսիա | 380 € |
| 22. | Վինիլ լամինատ | 220 մ² | 820 | 800 | 1 | Ֆրանսիա | 110 € |
| 23. | Ֆրեզերային հաստոց օգտագործված | 3<br>2 | 850<br>444 | 850<br>444 | 3<br>2 | Իտալիա<br>Ֆրանսիա | 180 €<br>70 € |
| 24. | Ձեռքի աշխատանքային գործիքներ | 5 | 37 | 37 | 1 | Ֆրանսիա | 50 € |
| 25. | Երեսպատման սալիկ | 2 մ² | 39 | 37 | 1 | Ֆրանսիա | 8 € |
| 26. | Կարի մեքենա | 1 | 12 | 12 | 1 | Ֆրանսիա | 10 € |
| 27. | Կտոր տրիկոտաժե | 19 | 261 | 250 | 19 | Ֆրանսիա | 35 € |
| 28. | Օգտագործված հագուստ | 3 | 47 | 44 | 3 | Ֆրանսիա | 15 € |
| 29. | Մանկական կոշիկ | 8 զույգ | 2 | 2 | 1 | Ֆրանսիա | 4 € |
| 30. | Մանկական ակնոց | 70 | 13 | 13 | 1 | Ֆրանսիա | 35 € |
| 31. | Գիրք | 29 | 335 | 315 | 29 | Ֆրանսիա | 145 € |
| 32. | DVD սկավառակ | 10 | 2 | 1 | 1 | Ֆրանսիա | 5 € |
| | | | 32800 | 32522 | 217 | | 6000 € |

Բեռի փոխադրման ծախսը կազմել է 3000 €

Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 417 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N Մ-089-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 1/01.3/10855-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 3/3.8-2/6696-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 29-ի N ՎՄ/3-4/5102-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 29.11.2013 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 29.11.2013 թվականին կնքված դրամաշնորհի համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի ծիանոցի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-089-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04421922) 2014 թվականի մարտի 10-ին կնքված՝ N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/7-14/1 պայմանագրի N 2 հավելվածում տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքի ձեռքբերում՝ 2,991,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 418 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-2/6834-14 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5408-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ (2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-317-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ 01569792) 2014 թվականի մարտի 7-ին կնքված N 12/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 5,900,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կիա Մոթորս Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01563753) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Kia Cerato 1.6L A/T» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7,333,333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վեկար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝00082994) 2014 թվականի ապրիլի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Chevrolet Niva» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7,210,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ-419-Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6689-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5648-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի (լաբորատոր սարքեր՝ 3 տեղ, 93.5 կգ ընդհանուր քաշով, 957,700 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 10000 ռուբլի, «Ձվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 420 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 3/3.8-2/6015-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N ԴԴ/22/3677-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 17-ի N ՎՄ/3-4/4640-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 1 տեղ, 17 կգ քաշով, 2,959.2 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 421 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/6049-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 17-ի N ԴԴ/22/3692-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 22-ի N ՎՄ/3-4/4788-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 25 տեղ, 168,5 կգ ընդհանուր քաշով, 30,505.86 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N - 422 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր, Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N ԱՔ/15-1/3900-14 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6886-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5348-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն ու 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշումներով հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր, Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-1020-Ա որոշման 2-րդ կետը՝

«2013 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ԲԸԱՇՁԲ-13/1 պայմանագրի N 1 հավելվածում» բառերից հետո լրացնել «և 2014 թվականի մարտի 21-ի N 2 ու 2014 թվականի ապրիլի 18-ի N 3 համաձայնագրերում» բառերով, իսկ «99,444,189» թվերը՝ փոխարինել «110,396,693» թվերով և «(49,722,094.5 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և



49,722,094.5 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի, N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում)» բառերը փոխարինել «(59,666,513 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և 50,730,180 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի, N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում)» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 423 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2/5825-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N ԴԴ/22/3509-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4577-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք և բուժպարագաներ՝ 212 արկղ, 1,501 կգ ընդհանուր քաշով, 11,173.31 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,998.8 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 424 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2/5826-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N ԴԴ/22/3507-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4578-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (ախտորոշման նյութեր՝ 1 արկղ, 56 կգ ընդհանուր քաշով, 2,546.22 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 287 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 425 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 15-ի N 3/3.8-2/5850-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 14-ի N ԴԴ/22/3508-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 16-ի N ՎՄ/3-4/4576-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Միացյալ Թագավորությունից ստացված բեռը (մարդկային շիճուկ՝ 1 տեղ, 0.15 կգ. ընդհանուր քաշով, 10 ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 45 ֆունտ ստերլինգին, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 426 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/6264-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N ԴԴ/22/3874-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4922-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Բելգիայի Թագավորությունից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 1 արկղ, 1.2 կգ քաշով, 392 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 61.4 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N - 427-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1014-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի 2014 թվական ապրիլի 16-ի N 0414/ԱԴՄ/035 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N 3/3.8-2/6343-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4919-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-1014-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը՝

«2013 թվականի ապրիլի 12-ին կնքված N V1/2013 պայմանագրում» բառերից հետո լրացնել «և 2014 թվականի ապրիլի 1-ի համաձայնագրում» բառերը, իսկ «1,476,200» թվերը՝ փոխարինել «2,877,570» թվերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N- 428 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE20140002 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7242-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 02/3108 -14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի մայիսի 16-ի N 07/07.1/2529-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5694-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 316,506 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20140002 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2014 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 23 համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 69,506,700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



2) անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 47764653) 2013 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 42 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 9,360,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի ու Տավուշի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

*Ծրագիրը հաստատված է*

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի կողմից*

*13 ապրիլի 2014թ.*

գործադիր տնօրեն ________ Շարոն Յուբենկ

***Համայնքներին մաքուր խմելու ջրի մատակարարման***
***Ծրագիր WE20140002***

| | |
|---|---|
| *1. Ծրագրի նպատակը* | *Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի մատակարարումը ՀՀ տարբեր մարզերի 24 համայնքների բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրային ցանցերի վերակառուցման կարիք ունի: Առաջարկվող 24 գյուղերի որոշ մասում, խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ՝ օգտագործման համար ոչ պիտանի խողովակներով: Ծրագրով նախատեսվում է այդ խողովակների փոխարինումը նոր խողովակներով:* |
| *2. Ծրագրի բարեգործական ոդակման նպատակը* | *Ծրագրի բարեգործական ոդակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից:* |
| *3. Բարեգործը* | *Բարեգործը Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիա Շահույթ Չհետապնդող Կազմակերպությունն է, հասցեն՝ ԱՄՆ-ի Յութա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք:* |
| *4. Ծրագրի կատարողը* | *Ծրագրի կատարողը Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիան է (այսուհետ նաև Կազմակերպություն)՝ ի դեմս Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչության:* |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | 2014թ-ի ջրագծերի վերանորոգման ծրագիրը իրականացվելու է ՀՀ 24 համայնքներում (դրանք ներկայացված են 7-րդ կետում): Ծրագրի իրականացման բնագավառը խմելու ջրամատակարարումն է: |
| 6. Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 316506 (երեք հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր վեց) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: Գումարները փոխանցվելու են Հայաստանյան Ներկայացուցչության բանկային հաշվին: |
| 7. Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալն են. Համայնքները ընտրվել են կարիքավորության և մեկ բնակչին ընկնող ծախսի հիման վրա: Ամբողջ աշխարհում նմանատիպ ծրագրերի իրականացման համար Կազմակերպության չափանիշների համաձայն յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող գումարը պետք՝ կազմի 10 ԱՄՆ դոլլարին համապատասխան գումար: Այս ծրագրից կօգտվի 28315 մարդ |

| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը |
|---|---|---|---|
| 1 | Արարատի | Գոռավան | 2200 |
| 2 | Վայոց Ձորի | Ռինդ | 1750 |
| 3 | Լոռի | Մարամեչ | 1850 |
| 4 | Շիրակ | Նահապետավան | 880 |
| 5 | Արագածոտնի | Արնուտ | 390 |
| 6 | Արագածոտնի | Աշնակ | 640 |
| 7 | Արագածոտնի | Օրգով | 675 |
| 8 | Գեղարքունիք | Գետիկ | 540 |
| 9 | Կոտայք | Գառնի | 1650 |
| 10 | Շիրակ | Հառիճ | 1850 |
| 11 | Գեղարքունիք | Գեղհովիտ | 2850 |
| 12 | Արագածոտնի | Ներքին Բազմաբերդ | 850 |
| 13 | Արագածոտնի | Վերին Սասնաշեն | 1150 |
| 14 | Շիրակ | Լեռնակերտ | 550 |
| 15 | Արագածոտնի | Ալագյազ | 750 |
| 16 | Արագածոտնի | Ջամշլու | 360 |
| 17 | Արագածոտնի | Երնջատափ | 790 |
| 18 | Տավուշ | Այգեհովիտ... | 2250 |
| 19 | Արագածոտնի | Կաթնաղբյուր | 860 |
| 20 | Տավուշ | Կողբ | 2300 |
| 21 | Լոռի | Սվերդլով | 970 |
| 22 | Արագածոտնի | Զորագյուղ | 580 |
| 23 | Շիրակ | Գետափ | 930 |
| 24 | Գեղարքունիք | Կարճաղբյուր | 700 |
| | Ընդամենը | | 28315 |

| | |
|---|---|
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2014թ. մայիսի 5-ից և կավարտվի ոչ ուշ քան 2014թ. նոյեմբերի 30-ը: Ծրագրի հիմնական միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 39534 մետր պոլիէթիլենային խողովակներ՝ 69 506 700 (վաթսունինը միլիոն հինգ հարյուր վեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ ածեքով՝ ներառյալ դրանց տեղափոխման և մոնտաժման արժեքը: Օգտագործվող շինանյութերի և վերանորոգման աշխատանքների արժեքը նախատեսվում է 33369217 (երեսուներեք միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի չափով: Նշված գումարը տրամադրվելու է համայնքներին տեղում շինանյութերի գնման և վերանորոգման աշխատանքների կազմակերպման համար: Համայնքներում նախատեսվում է տեղադրել թվով 42 ցայտաղբյուրներ՝ 9360000 (ինը միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ արժեքով՝ ներառյալ դրանց տեղափոխման և մոնտաժման արժեքը: Միջոցառումները կիրականացվեն 2014թ. մայիսից և կավարտվեն ոչ ուշ քան 2014թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2014թ. մայիսի 31-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2014թ. սեպտեմբերի 15-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են 10-րդ կետում: |

**10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**

Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական շուկայից՝ խողովակները և դրանց մոնտաժման համար անրաժեշտ պարագաները 69506700 (վաթսունինը միլիոն հինգ հարյուր վեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ աժեքով ձեռք են բերվելու “Վեդի պլաստ” ՍՊԸ-ից ք. Վեդի, Կոմիտասի 1, ՀՎՀՀ 04109451, Հ/հ 220123330239000, “ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ” Վեդու մ/ճ:

Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-4 ցայտաղբյուրներ, ընդամենը՝ 42 հատ: Դրանք մատակարարվելու, մոնտաժվելու և փորձարկվելու են Անհատ ձեռնարկատեր Մաթևոսյան Արմենի կողմից՝ ՀՎՀՀ 47764653, ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Մխչյան, Հայէկոնոմբանկ “Արտաշատ” մասնաճյուղ հ/հ 163098289495: Այս աշխատանքների ընդհանուր արժեքը կազմելու է 9360000 (ինը միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Այս աշխատանքների կատարման համար Անհատ ձեռնարկատեր Մաթևոսյան Արմենի հետ կնքված պայմանագրի պատճեն ներկայացվում է: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում:

| | | | ՎՕՍ Բարեգործական Կորպորացիայի կողմից վերանորոգվող խմելու ջրագծեր | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը | Պոլիէթիլենայի և և մետաղյա խողովակներ (մետր) | Խողովակների, կցամասերի և դրանց մոնտաժման արժեքը՝ դրամ | շինանյութերի և վերանորոգման աշխատանքների արժեքը՝ դրամ (տրվում է համայնքներին) | Ընդամենը դրամ | ցայտաղբյուրներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 10 |
| 1 | Արարատի | Գոռավան | 2200 | 2220 | 3275700 | 1301470 | 4577170 | 2 |
| 2 | Վայոց Ձորի | Ռինդ | 1750 | 2650 | 4843600 | 1944900 | 6788500 | 3 |
| 3 | Լոռի | Սարամեջ | 1850 | 2120 | 3460000 | 1543500 | 5003500 | 3 |
| 4 | Շիրակ | Նահապետավան | 880 | 1530 | 3042900 | 1274500 | 4317400 | 2 |
| 5 | Արագածոտնի | Արևուտ | 390 | 880 | 984800 | 1026000 | 2010800 | 1 |
| 6 | Արագածոտնի | Աշնակ | 640 | 1650 | 2310000 | 973450 | 3283450 | 2 |
| 7 | Արագածոտնի | Օրգով | 675 | 2300 | 3263200 | 1123250 | 4386450 | 2 |
| 8 | Գեղարքունիք | Գետիկ | 540 | 1540 | 2156000 | 1447650 | 3603650 | 2 |
| 9 | Կոտայք | Գառնի | 1650 | 1510 | 3693100 | 1451600 | 5144700 | 2 |
| 10 | Շիրակ | Հառիճ | 1850 | 934 | 3411000 | 457100 | 3868100 | 0 |
| 11 | Գեղարքունիք | Գեղհովիտ | 2850 | 4610 | 7318400 | 2880700 | 10199100 | 4 |
| 12 | Արագածոտնի | Ներքին Բազմաբերդ | 850 | 1660 | 3112900 | 1157000 | 4269900 | 2 |
| 13 | Արագածոտնի | Վերին Սասնաշեն | 1150 | 1830 | 3185100 | 1334500 | 4519600 | 1 |
| 14 | Շիրակ | Լեռնակերտ | 550 | 1110 | 2059900 | 645740 | 2705640 | 2 |
| 15 | Արագածոտնի | Ալագյազ | 750 | 0 | 0 | 631785 | 631785 | 0 |
| 16 | Արագածոտնի | Ջամշլու | 360 | 0 | 0 | 1218230 | 1218230 | 0 |
| 17 | Արագածոտնի | Երնջատափ | 790 | 1720 | 3064800 | 1355888 | 4420688 | 1 |
| 18 | Տավուշ | Աչաջուր | 2250 | 1050 | 3026100 | 2333800 | 5359900 | 2 |
| 19 | Արագածոտնի | Կաթնաղբյուր | 860 | 1530 | 2118000 | 1018000 | 3136000 | 1 |
| 20 | Տավուշ | Կոռք | 2300 | 2300 | 2686900 | 1472350 | 4159250 | 3 |
| 21 | Լոռի | Սվերդլով | 930 | 2030 | 3619700 | 1698960 | 5318660 | 2 |
| 22 | Արագածոտնի | Ձորագլուխ | 580 | 1600 | 2292800 | 2950000 | 5242800 | 2 |
| 23 | Շիրակ | Գետափ | 930 | 2150 | 3119700 | 1574980 | 4694680 | 2 |
| 24 | Գեղարքունիք | Կարճաղբյուր | 700 | 610 | 1476100 | 553864 | 2029964 | 1 |
| | Ընդամենը | | 28315 | 39534 | 67520700 | 33369217 | 100889917 | 42 |
| | խողովակների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | | | 1986000 | | 1986000 | |
| | ցայտաղբյուրների պատրաստման ծախսեր | | | | | 42հատx196500=8253000 | 8253000 | |
| | ցայտաղբյուրների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | | | | 1107000 | 1107000 | |
| | Ընդամենը ծախսեր | | | | 69506700 | 9360000 | 112235917 | |

Ա․ 5/6

**11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպ-չական ծախսերի համար հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ, քանի որ այդ ծախսերը չեն կատարվելու նվիրատվության գումարներից: *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչության գրասենյակի հետ կապված կոմունալ, կապի, վարձակալության ծախսերը նույնպես չեն վճարվելու նվիրատվության գումարներից: Ծրագրի համար ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատելու է ջրային ինժեները, որի ծառայություններից առաջացող եկամտային հարկը Ներկայացուցչությունը վճարելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է անմիջապես յուրաքանչյուր համայնքի, ինչպես նաև համապատասխան նախարարությունների և մարզպետարանների հետ:

**13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**

Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է Դոնորի՝ *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի և Կորպորացիայի լիազորված անձի՝ Չարլի Ռեդլինի կողմից:
Ծրագրի կատարողը հաշվետու է Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո սահմանված կարգով ու ժամկետներում Հանձնաժողովին ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ և տեղեկատվություն: Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի:

Ծրագրի լիազորված անձ Չարլի Ռեդլին ____________

Ա․ 5/6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 429-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-1/7172-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 02/3183 -14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 16-ի N ԱՄ/15-1/4604-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5693-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ՝ 02504895) իրականացվող՝ 113,874,400 դրամ ընդհանուր արժեքով «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում, բուժօգնություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի ենթադրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝



1) «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N S4002 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 430,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2013 թվականի օգոստոսի 5-ին կնքված N 2480057 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 262,196 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

4) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
«06» ____ 2014 թ.

# ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՎ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի , տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ<br>1214 Վերներ, Ժնև, Շվեցարիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ<br>ք. Երևան, Աճառյան 2<br>ՀՎՀՀ 02504895 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր:<br>Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 113874400 (հարյուր տասներեք միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները, ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերը, ՄԻԱՎ վարակով 1270 հիվանդներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2015 թվականի մարտի 31-ը, ծրագիրը շարունակական է: |



9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Սույն ծրագիրը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի (բարեգործական է որակվել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի Մ-1074-Ա որոշմամբ, և 2013թ. ապրիլի 26-ի թիվ Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) շրջանակներում ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագիր: Ծրագրի շրջանակներում նախատեսված ժամկետներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

| Անվանում | Գնահատված ծախսերը (ՀՀ դրամ) | Ծախսերի իրականացման ժամկետները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2014թ. II եռամսյակ | 2014թ. III եռամսյակ | 2014թ. IV եռամսյակ | 2015թ. I եռամսյակ |
| **Վերապատրաստում,այդ թվում.** | **2556353** | **1536433** | | **1019920** | |
| միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր | 1536433 | 1536433 | | | |
| սեմինար-վարժանքների ծախսեր (պետական կառույցների ներկայացուցիչների համար) | 409020 | | | 409020 | |
| մարզիչների վարձատրություն (պետական կառույցների ներկայացուցիչների համար սեմինար-վարժանքներ) | 102258 | | | 102258 | |
| սեմինար-վարժանքների ծախսեր (լաբորատոր մասնագետների պատրաստում) | 440470 | | | 440470 | |
| մարզիչների վարձատրություն (լաբորատոր մասնագետների պատրաստում) | 68172 | | | 68172 | |
| **Մշտադիտարկում և գնահատում, այդ թվում.** | **64523113** | **62429045** | **642195** | **809678** | **642195** |
| մոնիտորինգային այցեր ԿԽՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 2344762 | 669932 | 502449 | 669932 | 502449 |
| մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ) | 558984 | 139746 | 139746 | 139746 | 139746 |
| ՄԻԱՎ-ի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ՝ իրականացվելու է 3300 շահառուների շրջանում, այդ թվում՝ 400 թմրամիջոց-ների ներարկային օգտագործողների, | 53753667 | 53753667 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 400 կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց, 400 տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց շրջանում իրականացվելու են կենսաբանական (ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների իրականացում) և վարքագծային հետազոտություններ (հարցազրույցների ձևով), ինչպես նաև վարքագծային հետազոտություններ 350 քրեակատարողական հիմնարկներում գտնվողների, 550 միգրանտների և 1200 երիտասարդների շրջանում իրականացվելու են վարքագծային հետազոտություններ (հարցազրույցների ձևով) | | | | | |
| | | Գործնական հետազոտություն՝ իրականացվելու է 1200 շահառուների շրջանում հեպատիտների և սեռավարակների հետազոտություններ, այդ թվում՝ 400 թմրամիջոցների ներարկային օգտագործողների, 400 կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց, 400 տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց շրջանում | 7865700 | 7865700 | | | |
| | | **Ինֆրակառուցվածք և այլ սարքավորումներ, այդ թվում.** | **629256** | **157314** | **157314** | **262190** | **52438** |
| | | ավտոմեքենայի պահպանման ծախսեր | 629256 | 157314 | 157314 | 262190 | 52438 |
| | | **Կազմակերպչական ծախսեր, այդ թվում.** | **943884** | **235971** | **235971** | **471942** | |
| | | գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 943884 | 235971 | 235971 | 471942 | |
| | | **Լուսաբանման նյութեր, այդ թվում.** | **125856** | **31464** | **31464** | **62928** | |



| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղեկատվական/կրթական նյութեր | 125856 | 31464 | 31464 | 62928 | |
| | | **Աշխատանքային ռեսուրսներ, այդ թվում.** | **40470910** | **12141273** | **12141273** | **12141273** | **4047091** |
| | | աշխատավարձեր | 40470910 | 12141273 | 12141273 | 12141273 | 4047091 |
| | | **Անուղղակի ծախսեր, այդ թվում.** | **4625028** | **1156257** | **1156257** | **2092269** | **220245** |
| | | ավտոմեքենայի ապահովագրություն | 188784 | 47196 | 47196 | 47196 | 47196 |
| | | բենզին | 3744048 | 936012 | 936012 | 1872024 | |
| | | կապ. հեռախոսավարձ, ինտերնետ, փոստային ծախսեր | 692196 | 173049 | 173049 | 173049 | 173049 |
| | | **Ընդամենը՝ 113874400 ՀՀ դրամ** | | | | | |

**Ծրագրի բյուջեն ըստ եռամսյակների՝**

| **Ժամանակահատված** | **ՀՀ դրամ** |
|---|---|
| 2014թ. II եռամսյակ | 77687757 |
| 2014թ. III եռամսյակ | 14364474 |
| 2014թ. IV եռամսյակ | 16860200 |
| 2015թ. I եռամսյակ | 4961969 |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են ապրանքների և ծառայությունների ձեռքբերում և մատուցում՝ **113874400 դրամ** ընդհանուր արժողությամբ: |

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ) | Նշումներ |
|---|---|---|
| Միջազգային կոնֆերանսների, սեմինար-խորհրդակցությունների, հանդիպումների մասնակցության ծախսեր (արտասահման մեկնող տեղային մեկ մասնագետի համար) | 1536433 | |
| Սեմինար-վարժանքների ծախսեր (պետական կառույցների ներկայացուցիչների համար | 409020 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Մարզիչների վարձատրություն 19,5 ժամ*5244 դրամ | 102258 | |
| Սեմինար-վարժանքների ծախսեր (լաբորատոր մասնագետների պատրաստման համար) | 440470 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| Մարզիչների վարձատրություն 13 ժամ*5244 դրամ | 68172 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Մոնիտորինգային այցեր ԿԽՀ շարժական թիմի կողմից (1 մասնագետ և վարորդ), ընդամենը 14 այց* 167483 դրամ | 2344762 | |
| | | Մոնիտորինգային այցեր մոնիտորինգային խմբի կողմից (1 մասնագետ և վարորդ), ընդամենը 12 այց*46582 դրամ | 558984 | |
| | | **ՄԻԱՎ-ի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ, այդ թվում.** | **53753667** | |
| | | աշխատանքային ռեսուրսներ (աշխատավարձեր) | 42442000 | |
| | | հետազոտության մասնակիցների խրախուսում | 7992000 | |
| | | պատճենահանման ծառայություններ | 553650 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | ավտոմեքենայի վարձակալություն | 900000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | վարձակալված ավտոմեքենայի բենզինի ձեռք բերում | 846000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | գրենական պիտույքների ձեռք բերում | 300000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | վարժանք հետազոտողների համար | 720000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | **Գործնական հետազոտություն, այդ թվում.** | **7865700** | |
| | | աշխատանքային ռեսուրսներ (աշխատավարձեր) | 3030000 | |
| | | թեստ-հավաքածուներ և բժշկական նշանակության ապրանքների ձեռք բերում | 4835700 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար տեղեկատվական/կրթական նյութերի տպագրում | 125856 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | Աշխատանքային ռեսուրսներ (աշխատավարձեր) | 40470910 | |
| | | ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ) | 943884 | Օգտվելու է հարկային արտոնություններից |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2 ավտոմեքենաների պահպանման ծախսեր: Ավտոմեքենաներն օգտագործվում են տարբեր բուժհաստատություններում բուժվող ՄԻԱՎ վարակով հիվանդներին կոնսուլտացիաներ տրամադրելու, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցություն և մեթոդական օգնություն տրամադրելու, մոնիտորինգի և գնահատման խմբի աշխատանքներն իրականացնելու, հիվանդների արյան փորձանմուշները տեղափոխելու, հետազոտությունների համար արյան փորձանմուշները ռեֆերենս լաբորատորիա տեղափոխելու և այլ ծրագրային գործառույթներ իրականացնելու նպատակով | 629256 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրային գործառույթների իրականացման նպատակով օգտագործվող 2 ավտոմեքենաների համար բենզին | 3744048 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2 ավտոմեքենաների ապահովագրություն | 188784 | |
| | | **ՀՀ ԱՆ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կապի ծախսեր, այդ թվում.** | **692196** | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ պայմանագիր N S4002, կնքված 01.08.2013թ. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի (ք.Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև (կցվում է լուսապատճենը) | 430000 | Օգտվելու է հարկային արտոնություններից |
| | | բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ բաժանորդային պայմանագիր N2480057, կնքված 05.08.2013թ. «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի (ք.Երևան, Երևան Պլազա բիզնես կենտրոն Գրիգոր Լուսավորչի 9, ՀՎՀՀ 00098599) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև (կցվում է լուսապատճենը) | 262196 | Օգտվելու է հարկային արտոնություններից |

<table>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են կազմակերպչական ծախսեր՝ 5568912 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:<br><table>
<tr><th>Նկարագրություն</th><th>Նախատեսված բյուջե (ՀՀ դրամ)</th></tr>
<tr><td>Գրասենյակային ծախսեր (գրենական և տնտեսական ապրանքներ)</td><td>943884</td></tr>
<tr><td>2 Ավտոմեքենաների ապահովագրություն</td><td>188784</td></tr>
<tr><td>Բենզին</td><td>3744048</td></tr>
<tr><td>Կապի ծախսեր</td><td>692196</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td>5568912</td></tr>
</table></td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կամակերպություններ հետ</td><td>Նախատեսվում է համագործակցություն՝<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի,<br>- ՀՀ ֆինանսների նախարարության,<br>- ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների,<br>- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության,<br>- ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի,<br>- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), այլ միջազգային կազմակերպությունների հետ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատամաբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝<br>- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին,<br>- Հիմնադրամի տեղային գործակալին,<br>- ՀՀ առողջապահության նախարարությանը,<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Ծրագիրը կազմեց
ՀՀ առողջապահության նախարարության
«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գլխավոր հաշվապահ ____________ Ա. Գյուլնազարյան
Հեռ. 61-07-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 430 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 15.05.2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2014 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 1/01.3/10882-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6636-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 5-ի N 02/2877-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5325-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N 01/1971-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 45,019,900 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**ՀՀ բնապահպանության նախարարության**
**աշխատակազմի ղեկավարի կողմից**
**Է. Փիրումյան**
**<<23>> ապրիլի 2014թ.**

# ԾՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>«Արփի լիճ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համայրում նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Շիրակի մարզ, գ.Բերդաշեն<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում 45019.9 հազ.դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>18.04.2014թ. – 31.12.2014թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.03.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի ծրագիր՝ 01.05.2014թ. – 31.12.2014թ. – 45019.9 հազ.դրամ, այդ թվում՝<br>
1. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում - 3258.1 հազ.դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th></tr>
<tr><td>Գրասենյակային նյութեր և ապրանքներ</td><td>դրամ</td><td>1,0</td><td>488.1</td></tr>
<tr><td>Արտահագուստ</td><td>լրակազմ</td><td>37</td><td>2370.0</td></tr>
<tr><td>Անջրանցիկ կոշկեղեն</td><td>զույգ</td><td>37</td><td>370.0</td></tr>
<tr><td>Խալաթ</td><td>հատ</td><td>3</td><td>30.0</td></tr>
</table>
2. Գյուղատնտեսական ապրանքներ – 972.0 հազ.դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th></tr>
<tr><td>Անասնակեր /գարի/</td><td>կգ</td><td>5400</td><td>972,0</td></tr>
</table>
3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում – 3291.00 հազ.դրամ, այդ թվում՝</td></tr>
</table>

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Բենզին <Ռեգուլյար> | լիտր | 4100,0 | 1886.0 |
| Դիզելային վառելիք | լիտր | 1500,0 | 685,0 |
| Շարժիչի յուղ | լիտր | 40,0 | 120.0 |
| Արգելակի հեղուկ | լիտր | 40.0 | 44.0 |
| Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/ | լիտր | 40.0 | 48.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 8,0 | 508.0 |

4. Վերգետնյա տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում – **10766.0 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Ամենագնաց մեքենա | հատ | 1 | 10766.0 |

5. Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերում – **1144.8 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Ձիու թամբ սանձով | հավաքածու | 7 | 910.0 |
| Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | հատ | 4 | 1.4 |
| Տնտեսող լամպեր | հատ | 30 | 36.0 |
| Տնտեսող լամպեր | հատ | 14 | 30.8 |
| Ցերեկային լամպ 60սմ | հատ | 16 | 6.4 |
| Ցերեկային լամպ 120սմ | հատ | 16 | 7.2 |
| Սանդուղք մետաղյա | հատ | 4 | 48.0 |
| Մեկուսիչ ժապավեններ օղակաձև | հատ | 2 | 0.3 |
| Ռետինե խողովակ 2, 3/4" | մետր | 120 | 42.0 |
| Գինկապատ | հատ | 7 | 7.7 |
| Էլեկտրական երկարացման լար | հատ | 10 | 16.0 |
| Աղբարկղեր, պլաստմասայից | հատ | 20 | 12.0 |
| Աղբարկղեր, մետաղյա | հատ | 10 | 15.0 |
| Պոլիէթիլենային պարկ, աղբի համար | հատ | 600 | 6.0 |
| Հատակ մաքրելու ձող | հատ | 6 | 6.0 |

6. Կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերում–**94.7 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայու յունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Լվացքի փոշի | կիլոգրամ | 15 | 11.4 |
| Զուգարանների մաքրման նյութեր | հատ | 12 | 6.0 |
| Ավել | հատ | 12 | 9.0 |
| Ցախավել | հատ | 20 | 34.0 |
| Զուգարանի թուղթ | հատ | 60 | 6,0 |
| Օճառ | հատ | 30 | 7.2 |
| Օճառի տուփ | հատ | 6 | 1.5 |
| Սեղանի անձեռոցիկներ | հատ | 50 | 5,0 |
| Սպունգ սանիտարահիգիենիկ | հատ | 20 | 1.0 |
| Սպունգ, աման լվանալու | հատ | 10 | 0.3 |
| Կահույքի փայլեցման միջոց | հատ | 10 | 7.3 |
| Հատակի մածիկ | հատ | 5 | 6.0 |

7. Ծառայությունների ձեռքբերում – **8848.6 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա | դրամ | 1,0 | 3992.9 |
| Ջրամատակարարման և ջր.հեռացման | դրամ | 1,0 | 70.9 |
| Միջազգային և միջքաղաքային հեռախոսային | դրամ | 1,0 | 50.0 |
| Հանրային հեռախոսային ցանցի | դրամ | 1,0 | 172.8 |
| Բջջային հեռախոսների ծառայություններ | դրամ | 1,0 | 366.8 |
| Համացանց | դրամ | 1,0 | 324.0 |
| Փոստային ծառայություններ | դրամ | 1,0 | 4.2 |
| Բանկային ծառայություններ | դրամ | 1,0 | 40.0 |
| Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ | դրամ | 1,0 | 500.0 |
| Ներկայացուցչական ծառայություններ | դրամ | 1,0 | 750.0 |
| Բժշկական ծառայություններ | դրամ | 1,0 | 500.0 |
| Վերանորոգման աշխատանքներ | դրամ | 1,0 | 1000.0 |
| Ավտոմեքենաների նորոգում | դրամ | 1,0 | 660.0 |
| Սարքավորումների ընթացիկ նորոգում | դրամ | 1,0 | 40,0 |
| Մոնիտորինգի ծառայություններ | դրամ | 1,0 | 377.0 |

8. Աճեցվող ակտիվներ **4100.0 հազ.դրամ**, այդ թվում՝

| Ըստ առանձին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամով) |
|---|---|---|---|
| Ձի | հատ | 10 | 4100,0 |

9. «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) – **10598.7 հազ.դրամ:**

10. Պատվերով տպագրվող նյութեր՝ **1000.0 հազ.դրամ:**

11. Գործուղման ծախսեր՝ **946.0 հազ.դրամ:**

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **3258.1 հազ.դրամ**<br>2. Գյուղատնտեսական ապրանքներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **972.0 հազ.դրամ**<br>3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **3291.0 հազ.դրամ**<br>4. Վերգետնյա տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **10766.0 հազ.դրամ**<br>5. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **1144.8 հազ.դրամ**<br>6. Կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **94.7 հազ.դրամ**<br>7. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում |

| | | |
|---|---|---|
| | | ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **8848.6 հազ.դրամ**<br>**8.** Աճեցվող ակտիվներ (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) **-4100.0 հազ.դրամ**<br>**9.** Պատվերով տպագրվող նյութեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – **1000.0 հազ.դրամ:** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

11.5/4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 431 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6926-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22/4391-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5665-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 2 տեղ, 7 կգ ընդհանուր քաշով, 122.23 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Չվարթենց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 432 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7252-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22/4403-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5685-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (լաբորատոր ծախսանյութեր՝ 101 տեղ, 195,792 կգ ընդհանուր քաշով, 32,811.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 433 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6928-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22/4393-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5675-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 38 տեղ, 277 կգ քաշով, 15,756.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 78,957 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 434 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7246-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22/4424-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5699-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 3 տեղ, 7 կգ քաշով, 1,844 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 24,650 հնդկական ռուփի, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

15/15.8/7510-14
20.05.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**19 մայիսի 2014 թվականի N Մ- 435 - Ա**
**քաղ. Երևան**
(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մայիսի 16-ին)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N Մ-1311-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Արագիլ» հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 15-ի N 3/3.8-2/7310-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 19-ի N ՎՄ/3-4/6086-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արագիլ» հիմնադրամի կողմից ձեռք բերված դեղորայքը (8 արկղ, 123 կգ ընդհանուր քաշով, 124,749.45 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 16-ի «Արագիլ» հիմնադարմի կողմից իրականացվող «Աջակցություն վերարտադրողական բժշկության» ծրագրի մասին N Մ-1311-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ - 436 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-301-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/6885-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5650-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-301-Ա որոշման 1-ին կետում «փոխադրման ծախսերը կազմել են 503 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «փոխադրման ծախսերը կազմել են 33,135.44 հոնգկոնգյան դոլար, իսկ այլ ծախսերը՝ 503 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 437 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՍՈՏՔ - ՔԱՐՎԱՃԱՌ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ 13.65 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6162-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 02/2638-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 23-ի N ՎՄ/3-4/4858-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 13,700,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի Սոտք - Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կառուցման 2-րդ փուլի տեխնիկական հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2014 թվականի մարտի 10-ին կնքված՝ N ԼՂՏՀ-Ճ-09/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սոտք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կառուցման երկրորդ փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 13,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«16» ապրիլի 2014թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոթք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կառուցման 2-րդ փուլի տեխնիկական հսկողություն»

ԾՐԱԳԻՐ

օժանդակ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Սյունիքի մարզ, ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 13.700.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014 մարտի 10-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 10-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ճանճախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի կողմից Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոտք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65կմ երկարությամբ հատվածի կառուցման 2-րդ փուլի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 13.700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 438 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՋԱՏԻԿԱՎԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԱՄՆԱԳՈՄԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2-ՐԴ ՓՈՒԼ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/6119-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N 02/2563-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի ապրիլի 18-ի N ՍԿ/ԳՂ-2/1940-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 22-ի N ՎՄ/3-4/4790-14 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի ապրիլի 23-ի N 01/12.1/1306 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 26,740,565 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Ջատիկավան» ծրագրի շրջանակներում անամնագոմի վերակառուցում» ծրագիրը (2-րդ փուլ) (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00412375) 2014 թվականի մարտի 12-ին կնքված՝ N ՀՀ/Ա-1/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 26,340,565 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2014 թվականի մարտի 12-ին կնքված՝ N ՀՀ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2014 թվականի մարտի 12-ին կնքված՝ N ՀՀՏՀ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 250,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«15» ապրիլի 2014թ.

## «ՀՀ Կոտայքի մարզի Արզնի գյուղի տարածքում «Զատիկավան» ծրագրի շրջանակներում անասնագոմի վերակառուցում»

## ԾՐԱԳԻՐ

(2-րդ փուլ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել «Զատիկ» մանկատան նորաստեղծ ընտանիքների երիտասարդներին աշխատանքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, Արզնի գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 26.740.565,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | «Զատիկ» մանկատան շրջանավարտ երիտասարդների ընտանիքները |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ մարտի 12 -ից մինչեւ 2014թ. օգոստոսի 12-ը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «Վանի» ՍՊԸ-ի կողմից անասնագոմի վերակառուցման աշխատանքներ՝ 26.340.565,00 դրամ առանց ԱՀՀ-ի:<br><br>«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից անասնագոմի վերակառուցման հեղինակային հսկողություն՝150.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 250.000,00 դրամ առանց ԱՀՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Կոտայքի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ - 439 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԵԿ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7166-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 02/3124-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5692-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 40,627,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի մեկ մասնաշենքի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի ապրիլի 28-ին կնքված N ԼՀ-Կ-05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 40,627,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«30» ապրիլի 2014թ.

«ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի մեկ մասնաշենքի կահավորում »

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի մեկ մասնաշենքը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, մշակույթի բնագավառ |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 40.627.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ ապրիլի 28-ից մինչեւ 2014թ. սեպտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի մեկ մասնաշենքի կահավորում |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 40.627.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 440 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «Պ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԶՆՆՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 3/3.8-2/7130-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 02/3123-14, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 01/3.1/1950-14, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2014 թվականի մայիսի 13-ի N 03/12.1/2157-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5702 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 700,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի տեխնիկական վիճակի զննում և ուսումնասիրություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2014 թվականի ապրիլի 9-ին կնքված N ՀՀ/ՆՆ-03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնանորոգման ու տեխնիկական զննման ուսումնասիրության և հետազոտական աշխատանքների իրականացում՝ 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«29» ապրիլի 2014թ.

« Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի տեխնիկական վիճակի զննում և ուսումնասիրություն»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի սաների ուսումնառության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ ք. Երևան, մշակույթի բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 700.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ ապրիլի 09-ից մինչեւ 2014թ. հուլիսի 09-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի տեխնիկական վիճակի զննում և ուսումնասիրություն |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԳԾՆ» ՍՊԸ-ի կողմից Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի տեխնիկական վիճակի զննում և ուսումնասիրություն՝ 700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 441 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-311-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6970-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5649-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի թիվ 103 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման նախագծում» ծրագրի մասին» N Մ-311-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2014 թվականի ապրիլի 3-ին կնքված N 20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երևան քաղաքի Նոր-Նորքի վարչական շրջանի թիվ 103 մանկապարտեզի տանիքի վերանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ» աշխատանքային նախագծի փորձաքննություն՝ 50,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 442 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6971-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի 12 -ի N ՎՄ/3-4/5704-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բելառուսի Հանրապետությունից՝ անհատ բարերար Կարեն Տերտերյանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (АМКОДОР 702-ЕМ-03 մակնիշի 2013 թվականի արտադրության էքսկավատոր-բեռնիչ, 1տեղ, 370,508,400 բելառուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 25,183,536.58 բելառուսական ռուբլի, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ համայնքին փոխանցելու նպատակով: Էքսկավատոր-բեռնիչը ծառայելու է Թալիշ համայնքի կարիքների համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

15/15.8/7446-14
20.05.2014թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**19 մայիսի 2014 թվականի N Մ- 443 - Ա**
**քաղ. Երևան**
(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մայիսի 16-ին)

**«ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 92 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-2/6391-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 28-ի N 02/2789-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 25-ի N ՖԲ/ԱնՄ-4/2667-14-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 25-ի N ՎՄ/3-4/4917-14 և Երևանի քաղաքապետարանի 2014 թվականի ապրիլի 28-ի N 02/16-24588-h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 87,763,330 դրամ արժողությամբ «Երևանի թիվ 92 մանկապարտեզի վերակառուցում,վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Ակոռ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03811085) 2014 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ CCF-1-CT/1/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերակառուցման-վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 85,763,330 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

«Սթեմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555928) 2014 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերակառուցման-վերանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողության և շինարարական խորհրդատվության ծառայութունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն Աննա Սեդրակյան

19 մայիսի 2014թ.

«Երևանի թիվ 92 մանկապարտեզի վերակառուցում, վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերակառուցել և վերանորոգել Երևանի թիվ 92 մանկապարտեզի մոտ 900 քառ. մետր խարխուլ վիճակում գտնվող հատվածները՝ հարմարեցնելով նաև դրանք հատուկ կարիքավոր երեխաների նախադպրոցական ուսուցման, ցերեկային խնամքի և վերականգնողական թերապիայի իրականացման համար: Արդյունքում մանկապարտեզը կունենա վերանորոգված ընդհանուր օգտագործման մարզասրահ, վերականգնողական թերապիայի մասնաշենք, ներառական խմբերի սենյակներ, կվերանորոգմեն միջանցքներ և աստիճանավանդակներ, կկատարվի ճակատի բարեկարգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևանի Թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Բնագավառը՝ սոցիալական, առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 87.763.330 (ութսունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր երեսուն) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի |



| | | |
|---|---|---|
| | | հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2014թ. հոկտեմբերի 1-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի Թիվ 92 նախադպրոցական ուսումնական հաստատություն, հասցեն՝ ք. Երևան, Ա-1 թաղ., Սմաձյան փող. |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ.-ի ապրիլի 15-ից 2014թ. հոկտեմբերի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2014թ.-ի ապրիլի 15-ից 2014թ. հոկտեմբերի 1-ը: Ընդհանուր բյուջեն կազմում է 87.763.330դրամ, որից վերանորոգման աշխատանքների համար կծախսվի է 85.763.330 դրամ, տեխնիկական վերահսկողության համար՝ 2.000.000 դրամ: Նյութական մասի արժեքը ընդհանուրի մեջ կազմում է մոտ 45.000.00: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Ակոռշին» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 85.763.330 դրամ: Տեխնիկական վերահսկողության համար պայմանագիր է կնքվել «Մթեմ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 2.000.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևանի քաղաքապետարանի, , «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի, «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 444 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 մայիսի 13-ի N 3/3.8-2/7170-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/ 5703-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ 00804091) կնքված՝ ստորև նշված փոխանցման հաշվով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բրաբիոն ֆլորա սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01515808) 2014 թվականի ապրիլի 24-ին կնքված N 106Ա փոխանցման հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է բամբուկե պարիսպների ձեռքբերում՝ 858,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 445 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 12-ի N 3/3.8-2/6988-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5701-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Թբիլիսիի կենդանաբանական այգի» ոչ առևտրային կազմակերպության կողմից աջակցության նպատակով «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված կենդանիները (ընձառյուծ՝ 1 հատ, կովկասյան փասիան՝ 8 առանձնյակ, 9 տեղ, 96 կգ ընդհանուր քաշով, 7,769.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 120.75 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 446 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 մայիսի 12-ի N 3/3.8-2/7000-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12 -ի N ՎՄ/3-4/5644-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Միասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 00804091) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00103837) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 389,784 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02526227) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 10,083.4 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Լանկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538895) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 100,416 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Նոյավան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04100518) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 197,916 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 603,584 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Մագնատէս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02258158) 2014 թվականի ապրիլի 8-ին կնքված N ԿԱ-ՇՀԱՊՁԲ-14/06-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութերի մատակարարում՝ 34,450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 447 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-2/6553-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5201-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2014 թվականի ապրիլի 23-ին կնքված N 05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի մարզադաշտի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 25,845,516 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 448 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N Մ-366-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3.8-2/6160-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 22-ի N ՎՄ/3-4/4789-14 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 18-ի «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-366-Ա (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-418-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2014 թվականի մարտի 27-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլաստե դռների և լուսամուտների պատրաստում՝ 6,023,128 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 449 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-251-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՈՒՏՈՊԻԱՆԱ.ԱՄ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6181-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 17-ի N ՎՄ/3-4/4641-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 19-ի «Ուտոպիանա.ամ» մշակութային-ստեղծագործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տրանսֆորմեր – մշակույթ անիվների վրա» ծրագրի մասին» N Մ-251-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի երկրորդ պարբերությունում «Ստորակետ» ճարտարապետական գրասենյակ» բառերը փոխարինել «Մետաղ դիզայն» ՍՊԸ» բառերով:

2. Սահմանել, որ «Ուտոպիանա.ամ» մշակութային-ստեղծագործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետաղ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2014 թվականի ապրիլի 3-ին կնքված N 05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բեռնատարի թափքի տրանսֆորմացման աշխատանքների իրականացում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 450 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 8-ի N 3/3.8-2/6969-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 12-ի N ՎՄ/3-4/5646-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 3.4-րդ ենթակետում «28 450 000» թիվը փոխարինել «23,450,000» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 3.6-րդ ենթակետում «3 200 000» թիվը փոխարինել «8,200,000» թվով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 6.1-ին ենթակետը «շինվածքներ և այլն» բառերից հետո լրացնել «,շինարարական տեխնիկայի վարձակալում և ծառայությունների մատուցում» բառերով:

2. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեմքար» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06106307) հետ 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հուշային անհրաժեշտ հատվածները պահանջվող շինարարական նյութերն ու աշխատողներին բարձրացնելու ծառայությունը՝ 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոնոլիտիկ Յունիթ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01844091) հետ 2014 թվականի ապրիլի 25-ին կնքված N 12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Մեծ եղեռնի հուշային գրանիտե սալերով վերաերեսապատման աշխատանքների իրականացում՝ 18,308,180 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայնախագիծ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01503291) հետ 2014 թվականի ապրիլի 4-ին կնքված N ՆՊ 001-ԱՔ12 ՀՀ/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայոց ցեղասպանության թանգարանի վերակառուցման և ընդարձակման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 2,820,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Վուդկրաֆտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00440713) հետ 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N 13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գրիման» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02230486) հետ 2014 թվականի ապրիլի 25-ին կնքված N 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի հրդեհաշիջման ավտոմատ համակարգի չտեղակայված մասերի տեղակայման աշխատանքների իրականացում՝ 4,585,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 451 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔՍԱՆԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՊՐՈԵԿՏՈՐՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6625-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2868-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 04/07-1/4401-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5182-14, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N01/15/1578-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N01/1976-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N01/13.3/1510-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,830,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի, Տավուշի մարզի քսաներեք համայնքների դպրոցներին, կիրակնօրյա դպրոցներին պրոեկտորների նվիրաբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմպասս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01545204) 2014 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N WVA/ADPs-Proj/IT-14/003/FY14 պայմանագրում (2014 թվականի ապրիլի 14-ի N WVA/ADPs-Proj/IT-14/003/FY14-01/FY-14 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է պրոեկտորների մատակարարում՝ 4,830,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Շիրակի ու Տավուշի մարզպետարաններին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն՝ Ժիրայր Էդիլյան

22 ապրիլի 2014թ.

"ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի քանիերեք համայնքների դպրոցներին և կիրակնօրյա դպրոցներին պրոեկտորների նվիրաբերում"

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Բարելավել ՀՀ որոշ համայնքների դպրոցներում կրթության որակը՝ դպրոցներին տրամադրելով պրոեկտորներ</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ գրասենյակ,<br>հասցեն՝ 34834, Վեերհուզեր, Վեյ Սաութ,<br>Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ. 1-888-511-6548</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագրի կատարողը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռ.Մելիքյան փող., թիվ 1, ՀՎՀՀ՝ 02528755</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի ընդհանուր թվով քանիերեք համայնքների դպրոցներ և կիրակնօրյա դպրոցներ:<br>Բնագավառը՝ կրթություն</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4,830,000 (չորս միլիոն ութ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացողներն են հանդիսանում ՀՀ Տավուշի մարզի քան համայնքների դպրոցների աշակերտական և ուսուցչական անձնակազմերը,</td></tr>
</table>



<table>
<tr><td></td><td></td><td>Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների և Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի երեք համայնքների կիրակնօրյա դպրոցները:</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>28 փետրվարի 2014թ. – 31 մայիսի 2014թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td><table><tr><td>Միջոցառումների նկարագրությունը</td><td>Ժամկետները</td><td>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</td></tr><tr><td>ՀՀ Գեղարքունիքի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի քանիերեք համայնքների դպրոցների պրոյեկտորների նվիրաբերում</td><td>28 փետրվարի 2014թ. 30 մայիսի 2014թ.</td><td>4,830,000 ՀՀ դրամ</td></tr></table></td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Պրոեկտորներ ձեռք կբերվեն ՀՀ Գեղարքունիքի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի քանիերեք համայնքների դպրոցներին և կիրակնօրյա դպրոցներին նվիրաբերելու համար: Սարքավորումները մատակարարելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է մատակարար կազմակերպություն և պրոեկտորների մատակարարման պայմանագիր է կնքել "Կոմպասս" ՍՊԸ-ի հետ, պայմանագիրը կցվում է: Մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2014թ. փետրվարի 14-ից մինչև մայիսի 31-ը: Ծրագրի արժեքն է 4,830,000 (չորս միլիոն ութ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է ՀՀ Գեղարքունիքի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի և Տավուշի մարզի քանիերեք համայնքների դպրոցների և կիրակնօրյա դպրոցների հետ համագործակցելով:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ</td><td>Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի "Վորլդ</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վիժն Ինթերնեյշնլ" հայաստանյան կենտրոնական գրասենյակի և վերջինիս Վարդենիսի, Ճամբարակի, Ամասիայի և Տավուշի Տարածքային Զարգացման Ծրագրերի կողմից: "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

5/13

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 452 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՉՈՐՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6185-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 02/2637-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 23-ի N ՎՄ/3-4/4860-14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի ապրիլի 23-ի N01/09/2/2116-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,669,406 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04423145) 2014 թվականի մարտի 31-ին կնքված N WVA/SIS ADP/CM-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 2,669,406 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ վիժն ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն

Փիրույր Էդիլյան
28 մարտի 2014թ.

"Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքներին"
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի չորս համայնքներին շինարարական նյութեր տրամադրելու հարցում: Մասնավորապես՝ սույն ծրագրի շրջանակներում շինարարական նյութեր է տրամադրվելու Բռնակոթ, Շաքե, Տոլորս համայնքներին՝ փողոցների լուսավորության ցանց կառուցելու, իսկ Սիսիան համայնքի մարզադպրոցին՝մարզադահլիճի պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ, հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom, tel. +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755).* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ, Շաքե, Տոլորս և Սիսիան համայնքները: Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,669,406 (երկու միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր վեց) դրամ՝ առանց ԱԱՀ-ի: ֆինանսավորման աղբյուրը՝ "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակը: |
| | | <u>Ծախսի ուղղությունը</u> <u>չափը</u> <u>ժամկետը</u><br>Շինանյութերի մատակարարում 2,669,406 դրամ 2014թ. երկրորդ եռամսյակ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Բռնակոթ, Շաքե, Տոլորս և Սիսիան համայնքները, առավելապես՝ տվյալ համայնքների երեխաները և երիտասարդները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր առաջարկի: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 31 մարտի 2014թ. - 31 մայիսի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սյունիքի մարզի Բռնակոթ, Շաքե, Տոլորս համայնքների համայնքապետարաններին պետք է տրամադրվի շինարարական նյութեր և սարքավորումներ (խողովակներ, լուսատուներ, լամպեր, էլ. հաշվիչներ, էլ. հաղորդալարեր և այլն)՝ տվյալ համայնքներում փողոցների լուսավորության ցանց կառուցելու, Սիսիան համայնքի մարզադպրոցին՝ (լինոլեում, զուգարանակոնք, լվացարան և այլն) մարզադահլիճի հատակները և սանհանգույցը վերանորոգելու համար: Այդ աշխատանքները համայնքները կիրականացնեն իրենց ուժերով, իսկ նյութերը մատակարարելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է մատակարար կազմակերպություն և շինանյութերի մատակարարման պայմանագիր է կնքել "Ալեն-Էլեն" ՍՊԸ-ի հետ, պայմանագիրը կցվում է:: Մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2014թ.ապրիլի 1-ից մինչև մայիսի 31-ը: Ծրագրի արժեքն է 2,669,406 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Սյունիքի մարզի Բռնակոթ, Շաքե, Տոլորս համայնքների համայնքապետարաններին պետք է տրամադրվի շինարարական նյութեր և սարքավորումներ (խողովակներ, լուսատուներ, լամպեր, էլ. Հաշվիչներ, էլ. հաղորդալարեր և այլն)՝ համայնքների փողոցների լուսավորության ցանց կառուցելու, և Սիսիան համայնքի մարզադպրոցին՝(լինոլեում, զուգարանակոնք, լվացարան և այլն) մարզադահլիճի հատակները և սանհանգույցը վերանորոգելու համար: Այդ աշխատանքները համայնքները կիրականացնեն իրենց ուժերով, իսկ նյութերը մատակարարելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրված մատակարարը: Ծրագրի արժեքն է 2,669,406 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզի Բռնակոթ, Շաքե, Տոլորս և Սիսիան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է համապատասխան շինանյութերը հանձնել վերոհիշյալ չորս համայնքների ՏԻՄ-երին՝ վերանարոգված օբյեկտները 15 տարվա ընթացքում չօտարելու պայմանով: |

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակի, Բոնակոթ, Շաքե, Տոլորս և Սիսիան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մայիսի 2014 թվականի N Մ - 453 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6628-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2871-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5324-14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2014 թվականի մայիսի 5-ի N 01/2283-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,482,879 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417458 2014 թվականի ապրիլի 14-ին կնքված N WVA/SIS ADP/CW-14/001 (RB)/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,482,879 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Էդիլյան

23 ապրիլի 2014թ.

## "ՀՀ Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում" Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել ՀՀ Սյունիքի մարզի երեք համայնքների շին. վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հարցում: Մասնավորապես՝ սույն ծրագրի շրջանակներում շին. վերանորոգման աշխատանքներ են իրականացվելու Խոտ համայնքում՝ փողոցները լուսավորելու, Սալվարդ համայնքում՝ կենցաղի տան խոհանոցային պայմանները և Գորայք համայնքում գրադարանի շենքային պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom,<br>հեռ. +44 1908 841000 |
| 4 | Ծրագիրը կատարողը | "Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ *(հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755)*: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքները:<br>Բնագավառը՝ սոցիալական |

<table>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>ֆինանսավորման աղբյուրը "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ,
<table>
<tr><th>Ծախսի ուղղությունը</th><th>չափը</th><th>ժամկետը</th></tr>
<tr><td>Շին. վերանորոգման աշխատանքների իրականացում</td><td>3,482,879 ՀՀ դրամ</td><td>2014թ. երկրորդ եռամսյակ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող են հանդիսանում Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքները, առավելապես՝ տվյալ համայնքների երեխաները և երիտասարդները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագիր առաջարկի:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>14 ապրիլի 2014թ. -14 հունիսի 2014թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ Սյունիքի մարզի Խոտ համայնքում կանցկացվի փողոցների լուսավորության 420մ երկարությամբ գիծ 12 լուսատուներով, Սալվարդ համայնքում կվերանորոգվի կենցաղի տան խոհանոցը և կանցկացվի կոյուղագիծ, Գորայք համայնքում կվերանորոգվի գրադարանի տանիքը: Այդ աշխատանքները իրականացնելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և աշխատանքների իրականացման պայմանագիր է կնքել «ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ, պայմանագիրը կցվում է: Աշխատանքները սկսվել են 2014թ. ապրիլի 14-ից և կավարտվեն մինչև 2014թ. հունիսի 14-ը: Ծրագրի արժեքն է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>ՀՀ Սյունիքի մարզի Խոտ համայնքում կանցկացվի փողոցների լուսավորության 420մ երկարությամբ գիծ 12 լուսատուներով, Սալվարդ համայնքում կվերանորոգվի կենցաղի տան խոհանոցը և կանցկացվի կոյուղագիծ, Գորայք համայնքում կվերանորոգվի գրադարանի տանիքը: Այդ աշխատանքները իրականացնելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և «ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կնքել է աշխատանքների</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | իրականացման պայմանագիր: Ծրագրի արժեքն է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Այդ թվում՝ ըստ համայնքների.<br><br>Խոտ համայնք 899,993 դրամ<br>Սալվարդ համայնք 895,199 դրամ<br>Գորայք համայնք 1,687,687 դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է համապատասխան աշխատանքները հանձնել վերոհիշյալ երեք համայնքների ՏԻՄ-երին 15 տարվա ընթացքում դրանք չօտարելու պայմանով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակի, ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: "Վորլդ Վիժն Ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

5/10

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 454 -Ա**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՖԼԱՆԵԼԵ ՄԵԾ ՓՈԹԵԹՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6640-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2869-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5231-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 10,250.02 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Կիրակնօրյա դպրոցների երեխաների համար նախատեսված Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ներմուծվելու են Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթներ՝ 933 lbs քաշով, 10,250.02 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԱՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Էլիյան

25 ապրիլի 2014թ.

«Կիրակնօրյա դպրոցների երեխաների համար նախատեսված Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթների ձեռքբերում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել հայ մանուկների քրիստոնեական ուսուցմանն ու դաստիարակությանը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Վորլդ վիժն Հայաստանի տարածքային զարգացման տասներեք ծրագրերի տարածքներում գործող կիրակնօրյա դպրոցները քրիստոնեական ուսուցման «Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթներով» ապահովելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | “Վորլդ Վիժն Ինթերներյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության<br>ԱՄՆ գրասենյակ<br>հասցեն՝ 34834, Վեերիուզեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ. 1-888-511-6548 |
| 4. | Ծրագիրը կատարողը | “Վորլդ վիժն ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան<br>Բնագավառը՝ սոցիալական-հոգևոր |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում.է 10,250.02 (տասը հազար երկու հարյուր հիսուն դոլար երկու ցենտ) ԱՄՆ դոլար կամ 4,253,750 (չորս միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, տեղափոխման ծախսերը ներառյալ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողներն են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Վորլդ Վիժն Հայաստանի տարածքային զարգացման տասներեք ծրագրերի (Ամասիայի, Գյումրու, Ալավերդու, Ստեփանավանի, Իջևանի, Ճամբարակի, Գավառի, Վարդենիսի, Ապարանի, Թալինի, Երևանի, Սիսիանի և Կապանի) տարածքներում գործող կիրակնօրյա դպրոցների աշակերտները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ.-ի ապրիլի 16-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 26-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Կիրակնօրյա դպրոցների երեխաների համար նախատեսված «Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթների» ձեռքբերում | 2014թ.-ի ապրիլի 16-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 26-ը | 10,250.02 (տասը հազար երկու հարյուր հիսուն դոլար երկու ցենտ) ԱՄՆ դոլար կամ 4,253,750 (չորս միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ տեղափոխման ծախսերը ներառյալ |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Կիրակնօրյա դպրոցների երեխաների՝ համար նախատեսված քանիինզ հատ «Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթները» ձեռք են բերվել Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կողմից: Ներկայումս դրանք պետք է ներմուծվեն Հայաստանի Հանրապետության տարածք: «Աստվածաշնչի ֆլանելե մեծ փաթեթների» ձեռքբերման ընդհանուր արժեքը կազմում է 10,250.02 (տասը հազար երկու հարյուր հիսուն դոլար երկու ցենտ) ԱՄՆ դոլար կամ 4,253,750 (չորս միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ տեղափոխման ծախսերը ներառյալ: Ներմուծված ֆլանելե փաթեթները տրամադրվելու են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Վորլդ վիժն Հայաստանի տարածքային զարգացման տասներեք ծրագրերի (Ամասիայի, Գյումրու, Ալավերդու, Ստեփանավանի, Իջևանի, Ճամբարակի, Գավառի, Վարդենիսի, Ապարանի, Թալինի, Երևանի, Սիսիանի և Կապանի) տարածքներում գործող կիրակնօրյա դպրոցներին՝ նպաստելու նշյալ դպրոցների սաների քրիստոնեական ուսուցմանն ու դաստիարակությանը:<br>Ակնկալվում է ստանալ նշված փաթեթների ներմուծման հետ կապված հարկային արտոնություններ, կից ներկայացվում են փաթեթների գնման հաշիվները: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական | “Վորլդ վիժն ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան՝ մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու |

| | | |
|---|---|---|
| | ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի ազգային գրասենյակի և վերջինիս՝ Գործառնությունների բաժնի կողմից:<br>«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**16 մայիսի 2014 թվականի N Մ- 455 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ԵՎ ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՎՐԱ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-2/6182-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N 02/2636-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի ապրիլի 22-ի N ՍԿ/ԳՂ-2/1973-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 23-ի N ՎՍ/3-4/ 4834-14 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2014 թվականի ապրիլի 25-ի N01/11.1/1394 -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,114,141 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան և Պառավաքար համայնքներում խաղողի այգիների վրա հակակարկտային ցանցերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04112197) 2014 թվականի մարտի 28-ին կնքված՝ N WVA/TAV ADP/SAHN-14/001/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակակարկտային ցանցերի տեղադրում՝ 2,114,141 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Եդիլյան

23 ապրիլի 2014թ

«ՀՀ Տավուշի մարզի Դիտավան և Պառավաքար համայնքներում խաղողի այգիների վրա հակակարկտային ցանցերի տեղադրման»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել Տավուշի մարզի Դիտավան և Պառավաքար համայնքներին՝ հիմնելու հակակարկտային ցանցեր խաղողի այգիների վրա, կարկտահարությունից պաշտպանելու և բարձր բերքատվություն ստանալու նպատակով: Յուրաքանչյուր համայնքում կծածկվի 3000մ² խաղողի այգի: Ինչպես նաև, ծրագրի միջոցով ցույց տալ այլ խաղողագործ ֆերմերներին այգիները կարկտահարությունից պաշտպանելու արդյունավետ տարբերակ, ոգևորել նրանց՝ հետագայում սեփական ուժերով նախաձեռնելու այս եղանակը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակի կողմից:<br>Հասցե: 34834 Վեերհուզեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001 ԱՄՆ<br>հեռ. 1-888-511-6548 www.worldvision.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1<br>ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, Դիտավան և Պառավաքար համայնքներ:<br>Բնագավառը՝ գյուղատնտեսություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 2,114,141 (երկու միլիոն հարյուր տասնչորս հազար հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Տավուշի մարզի Դիտավան համայնքի երեք ընտանիք և Պառավաքար համայնքի երկու ընտանիքը: Նշված ընտանիքներն ընտրվել են հետևյալ չափանիշներով՝ ունենալ խաղողի այգիներ՝ համապատասխան հակակարկտային ցանցի տեղադրման պահանջներին (ուղիղ շարքեր և ամուր սյուներ), ունենալ խաղողագործության փորձ, ունենալ երեխաներ, որոնք Վորլդ Վիժն կազմակերպության շահառուներն են հանդիսանում, ունենալ շահագրգռվածություն ծրագրում մասնակցելու և փորձն այլ խաղողագործներին փոխանցելու պատրաստակամություն, ստանձնել պարտավորություն հետագա շահագործման և պահպանման պայմանով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 28 ապրիլ 2014թ. – 10 հունիս 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| Բաց մրցույթի անցկացում՝ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա ապրանքների մատակարարում իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով | Մարտ 2014 | ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| ՀՀ Տավուշի մարզի Պառավաքար և Դիտավան համայնքների խաղողի այգիներում հակակարկտային ցանցերի տեղադրում( 3000 մ ² ցանց յուրաքանչյուր համայնքում) | մայիս 2014 - հունիս 2014թ. | 1.057.070, 5 դրամ Պառավաքար համայնքում և 1.057.070, 5 դրամ Դիտավան համայնքում: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Պառավաքար և Դիտավան համայնքների խաղողի այգիների համար նախատեսված հակակարկտային ցանցերի և պլաստիկ զսպանակակեռերի մատակարարումն իրականացվելու է << ԻԵՍԱՅԻ>> ՍՊԸ-ի կողմից, որն ընտրվել է մրցույթի արդյունքում: Պառավաքար և Դիտավան համայնքների հակակարկտային ցանցերի համար նախատեսված է 2,114,141 (երկու միլիոն հարյուր տասնչորս հազար հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ: Յուրաքանչյուր համայնքում կծածկվի 3000մ² խաղողի այգի: |
